# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 30 (1330) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 2007
VOLUME 27, NO. 30 (1330) SATURDAY, SEPTEMBER 1, 2007

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՐԷԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՇՓՈԹ ԿԸ ՅԱՌԱՋԱՑՆԷ ԹԵԼ ԱԻԻՎԻ ՈՒ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ

«Ընդդէմ Վարկաբեկման Միութիւն» (ADL) կազմակերպութեան Նիւ Ինկլընտի շրջանային վարչութեան ղեկավար Էնտրու Թարսին պաշտօնանկ ընելու հարցը եւ ապա շրջադարձ կատարելով նոյն կազմակերպութեան կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը, իր արձագանքները ունեցաւ նաեւ Թել Աւիվի ու Անգարայի մէջ, մղելով Իսրայէլի եւ Թուրքիոյ ղեկավարներուն արագ խորհրդակցութիւններ ունենալու՝ երկու երկիրներու միջեւ հետագայ յարաբերութեանց շուրջ:

Ինչպէս ծանօթ է, Էնտրու Թարսի պաաշտօնանկ եղած էր Ամերիկայի Հրէական մեծագոյն կազմակերպութիւններէն մին նկատուող «Ընդդէմ Վարկաբեկման Միութեան» կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը պահանջած ըլլալուն համար: Թարսիի նկատմամբ առնուած պատժամիջոցը դժգոհութեան լայն ալիք յառաջացնելով կազմակերպութեան շարքերէն ներս, մղեց ղեկավարութեան որպէսզի վերատեսութեան ենթարկէ՝ Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ իր կեցուածքը: Կազմակերպութեան տնօրէն Աբրահամ Ֆաքսմըն նախ յայտարարեց որ իրենք կ՚ընդունին որ հայութեան հետ պատահածը համազօր էր ցեղասպանութեան, սակայն պիտի չսատարեն Ամերիկեան Գոնկրէսէն ներս նոյն հարցի շուրջ բանաձեւին: Մի քանի օր ետք Ֆաքսմըն նաեւ վերականգնեց Էնտրու Թարսին իր նախկին պաշտօնին:

«Ընդդէմ Վարկաբեկման Միութիւնը» եւ Ամերիկայի Հրէական միւս կազմակերպութիւնները միջեւ օրս կը գործակցէին Իսրայէլի եւ Թուրքիոյ իշխանութիւններուն հետ՝ արգելք հանդիսանալով Հայկական Ցեղասպանութեան բանաձեւերու ընդունման:

Հրէական ազդեցիկ կազմակերպութեան դիրքորոշումին մէջ կատարուած մասնակի փոփոխութիւնը մտահոգութիւն յառաջացուց Իսրայէլի մէջ, ուր երկրի նախագահ Շիմոն Փերէս հեռաձայնային խօսակցութիւն ունենալով Թուրքիոյ վարչապետ Ռէջեփ Էրդողանին հետ վստահեցուց, որ Իսրայէլ կը փափաքի պահպանել սերտ կապերը մահմետական երկրին հետ: Փերէս շեշտեց Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարեւորութիւնը Իսրայէլի համար:

Անգարայի մէջ Իսրայէլի դեսպանատունը յայտարարութիւն մը տարածելով ըսած է թէ, հրէական պետութիւնը կ՚ընդունի, որ տեղի ունեցած են «սարսափելի դէպքեր», եւ հայութիւնը «ահաւոր տառապանքներ» կրած է: Դեսպանատան յայտարարութիւնը կ՚աւելցնէ թէ, Իսրայէլ կոչ կ՚ընէ հրեաներուն «կողմնակալ չըլլալ»: «Տարիներու ընթացքին այս թեման հայերու եւ թուրքերու համար ակամայ դարձած է քաղաքական բարդ հարց: Իսրայէլը հրեաներէն կը խնդրէ չգրաւել որեւէ կողմ եւ չտալ տեղի ունեցածի որեւէ որակում: Մենք յոյսով ենք, որ կողմերը իրենք կը ներգրաւուին բաց երկխօսութեան մէջ, ինչ որ աւելի կու տայ դարմանելու վէրքերը»,- ըսուած էր դեսպանատան հաղորդագրութեան մէջ:

Իր կարգին, Թուրքիոյ մէջ գործող «Ցեղասպանութեան անհիմն պնդումներուն դէմ պայքարի» կազմակերպութիւնը արշաւ մը սկսած է հրէական «Ընդդէմ Վարկաբեկման Միութեան» դէմ՝ անոր կողմէ Հայոց Ցեղասպանութեան հարցի նկատմամբ դիրքորոշումը փոխելու պատճառաւ: Ըստ թրքական «Միլլիէթ» թերթին, կազմակերպութեան նախագահ, Աթաթուրքի համալսարանի դասախօս Սաւաշ Էդիլմեզի նախաձեռնութեամբ, բողոք-նամակներու արշաւ մը սկսած է Միութեան էլեկտրոնային հասցէին:

## ԱԲԴՈՒԼԱ ԳԻՒԼ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԹՈՒՐՔԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ



Թուրքիոյ նորընտիր նախագահ Աբդուլա Գիւլ

Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարար Աբդուլա Գիւլ Օգոստոս 28-ին ընտրուեցաւ երկրի նախագահ: Խորհրդարանի կողմէ կատարուած ընտրութեան ընթացքին Գիւլի ի նպաստ քուէարկեցին 339 պատգամաւոր:

Թուրքիոյ նորագոյն պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Իսլամական արմատներ ունեցող կուսակցութեան թեկնածուն դարձաւ նախագահ: Թուրքիոյ զինուորականութիւնը, որը զգալի դեր կը խաղայ երկրի քաղաքական կեանքէն ներս, բազմաթիւ անգամներ յայտարարած է, որ պետութեան ղեկավարը պէտք է խորհրդանիշը ըլլայ երկրի աշխարհիկ բնոյթը: Այս առումով շատեր դժգոհ են որ, Գիւլի կինը իսլամական տարազ կը հագնի:

Գիւլի թեկնածութիւնը մի քանի անգամ մերժուած էր խորհրդարանին կողմէ, երկու-երրորդ քուէներ չստանալուն համար: Վերջին քուէարկութեան անհրաժեշտ էր կէսէն մէկ աւելի քուէ, ինչ որ ապահովուած էր, վերջերս կայացած խորհրդարանական ընտրութիւններու վարչապետ Ռէջեփ Էրդողանի գլխաւորած «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան արձանագրած յաղթանակին շնորհիւ:

## ՍՊԱՆՆՈՒԱԾ Է ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԸ

Օգոստոս 25-ին անյայտ անձի կողմէ սպաննուած է Հայաստանի Լոռիի մարզի դատախազ, Արդարադատութեան երրորդ կարգի պետական խորհրդական Ալբերտ Ղազարեանը՝ կէս գիշերին աշխատանքէն վերադառնալու ճամբուն վրայ, իր տան մօտակայքը:

Հայաստանի գլխաւոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա Տրուզեանի համաձայն, Ղազարեանի ուղղութեամբ արձակուած է 4 կրակոց: Դէպքի վայրի զննութեամբ յայտնաբերուած է «Մակարով» տեսակի ատրճանակի 4 պարկուճ:

Գլխաւոր դատախազի մամուլի քարտուղարի հաղորդագրութեան համաձայն, ստեղծուած քննչական խումբի կազմէն ներս ընդգրկուած են Հայաստանի դատախազութեան, ոստիկանութեան եւ ազգային անվտանգութեան փորձառու աշխատակիցները:

Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեանը Օգոստոս 27-ին մեկնած է Լոռու մարզ՝ մասնակցելու Ղազարեանի յուղարկաւորութեան արարողութեան

Ալբերտ Ղազարեան շուրջ 25 տարի տարբեր պաշտօններ վարած է Լոռու մարզի դատախազութեան համակարգէն ներս՝ Վանաձորի դատախազի օգնական, աւագ օգնական, Գուգարքի շրջանի դատախազ, Ստեփանաւանի միջշրջանային դատախազի օգնական, Ստեփանաւանի միջշրջանային դատախազ: 1999 - 2006 թուականներուն եղած է Լոռու

Շար.ը էջ 4

## ՍԴՀԿ-Ի ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 120-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ ՏՕՆԱԿԱՆ ԵՐԹ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ




Տեսարան մը Երեւանի մէջ տեղի ունեցած երիդասարդական երթէն՝ Հնչակեան Կուսակցութեան 120-ամեակին առթիւ

ԵՐԵՒԱՆ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Օգոստոսի 23-ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Սարգիս Տխրունի» ուսանողական միութեան նախաձեռնութեամբ կուսակցութեան հիմնադրման 120-ամեակի առթիւ կազմակերպուեցաւ տօնական երթ Երեւանի Հանրապետութեան Հրապարակէն դէպի Ազատութեան Հրապարակ: Երթին կը մասնակցէր նաեւ Հալէպի Հայկական Մարմնամարզական Միութեան (ՀՄՄ) շուրջ 80 երիտասարդներէ բաղկացած նուագախումբը:

Ըստ միութեան ատենապետ Նարեկ Գալստեանի, օրուայ ընտրութիւնը խորհրդանշական էր, քանի որ այդ օրը կը նշուէր Հայաստանի երրորդ հանրապետութեան Անկախութեան հռչակագրի ընդունման 17-րդ տարեդարձը:

«Տօնակատարութիւնների շրջանակներում մեր միւս կուսակիցները այցելեցին Ծիծեռնակաբերդ եւ Եռաբլուր՝ ծաղկեպսակ դնելով Մեծ Եղեռնի զոհերի յիշատակը յաւերժացնող յուշակոթողին»,- ըսաւ ան:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՒՈՐՈՒՄՆԵՐ «ԱՋԱԲՍԱՆԴԱԼԱՅԻՆ» ՏԱՐԲԵՐԱԿՈՎ

> Սերժ Սարգսեանի մրցակից առայժմ հիմնականում յիշատակւում է Լեւոն Տէր-Պետրոսեանի անունը: Դէպի Տէր-Պետրոսեան է տանում նաեւ Պարոյր Հայրիկեանի կողմից նախաձեռնած ընդդիմադիր ինտեգրման նոր ֆորմատը

*Խորհրդարանական ընտրութիւններում ընդդիմութեան ներուժը եւ քուէները «յաջողութեամբ» փոշիացնելուց յետոյ շատ է խօսւում քաղաքական միաւորումների խոշորացման, միաւորման, մի շարք խոշոր գաղափարական առումով միատարր կուսակցութիւններ ստեղծելու մասին: Այդ թեմայի շուրջ դատողութիւն են անում ինչպէս ընդդիմադիրները, այնպէս էլ իշխանամէտները: Զորօրինակ՝ վերջերս յայտնի իշխանամէտ արուեստագէտ Հենրիկ Իգիթեանը, որը 1989-ին աչքի էր ընկել Միխայիլ Գորբաչովի երեսին նետած իր բաւականին կոպիտ թեւաւոր խօսքով, այդ թեմայի շուրջ անգամ հսկայական հարցազրոյց տուեց, որի լեյտմոտիւը «դէ միաւորէ՛ք, էլի՛» բացականչութիւնն է:*

*Եւ միաւորման ու խոշորացման գործընթացը կարծես թէ մեկնարկեց: «Դաշինք» կուսակցութեան առաջնորդ Սամուէլ Բաբաեանը եւ իր կուսակիցները, «Ազգային վերածնունդ» կուսակցութեան նոմինալ ղեկավար Ալբերտ Բազէեանը շրջանառութեան մէջ դրեցին այն, որ միաւորւում են Հայաստանի Ռամկավար-Ազատական Կուսակցութեան դրօշի ներքոյ, եւ այդ նպատակով իրենց կուսակցութիւնները յայտարարելու են ինքնալուծարման մասին:*

*«Դաշինքի» պարագայում կարծես թէ ամէն ինչ բաւականին բնական է. ԱԺ ընտրութիւններին ՀՌԱԿի ատենապետ Յարութիւն Առաքելեանը «Դաշինք»ի համամասնական ցուցակում 11-րդն էր, եւ ընդհանրապէս այդ երկու կուսակցութիւնների սերտ համագործակցութիւնը բաւականին վաղուց էր սկսուել: Այդ երկու կուսակցութիւններն էլ գաղափարապէս իրարից հեռու չեն, քանի որ «Դաշինք»ը հռչակել է հաւատարմութիւն եւրաինտեգրման սկզբունքին, իսկ ռամկավարները դաւանում են ազատական արժէքներ: Պարզ է, որ Հայաստանեան պայմաններում ցուցանակը լինելու է ռամկավարական, ինչը թերեւս կ՚ապահովի Սփիւռքի ռամկավարների գաղափարական եւ ոչ միայն գաղափարական աջակցութիւնը, իսկ «Դաշինք»ի կառոյցները դառնալու են նորացուած ՀՌԱԿ-ի «մարմինը»:*

*Սակայն այդ գործընթացում այնքան էլ բնական չէ Ալբերտ Բազէեանի մասնակցութիւնը: Յիշեցնենք, որ Բազէեանը ՀԺԿ-ի համամասնական ցուցակում երկրորդն էր, եւ այդպիսի կտրուկ «թռիչքը» բաւականին տարօրինակ տեսք ունի: Բացի այդ, «Ազգային վերածնունդ» կուսակցութիւնը յայտնի է նրանով, որ հայ-ռուսական բարեկամութեան ջերմ կողմնակից է, ուստի գաղափարական առումով այդ կուսակցութեանը դժուար է պատկերացնել ռամկավարական ցուցանակի ներքոյ: Եթէ դրան գումարենք նաեւ այն, որ Ալբերտ Բազէեանը, մեղմ ասած, իրեն հեռու էր պահում հարազատ կուսակցութեան ներքին կեանքին մասնակցելուց, եւ կուսակիցներն էլ մամուլից իմացան, որ կուսակցութիւնը պէտք է լուծարուի եւ ձուլուի ռամկավարներին, ապա պարզ է դառնում, որ կուսակցութիւնների միաձուլման այդ առաջին փորձն էլ, մեղմ ասած, այդքան էլ հարթ չէ, քանզի «աջաբսանդալային» բաղադրիչը բաւականին զօրեղ է:*

*Ինչեւէ, պարզ է նաեւ, որ նոյն Բազէեանը անգամ եթէ կուսակիցների հետ հասունացող սկանդալից յետոյ մուտք գործի ՀՌԱԿ, առանձնապէս մեծ դերակատարութիւն չի ունենալու, իսկ հիմնական «տան տուողը» լինելու է ոչ թէ Յարութիւն Առաքելեանը, այլ հենց Սամուէլ Բաբայեանը: Սակայն վերջինս բազմիցս է պնդել եւ հիմա էլ կրկին վերահաստատել, որ ՀՀ նախագահի պաշտօնին ձգտելու յաւակնութիւններ չունի: Ուստի այդ նորացուող եւ խոշորացուող քաղաքական միաւորը նախագահական ընտրութիւններում պաշտպանելու է ինչ-որ թեկնածուի: Արդեօք ո՞վ է լինելու այդ թեկնածուն առայժմ պարզ չէ:*

*Իսկ որպէս Սերժ Սարգսեանի մրցակից առայժմ հիմնականում յիշատակւում է Լեւոն Տէր-Պետրոսեանի անունը: Դէպի Տէր-Պետրոսեան է տանում եւ Պարոյր Հայրիկեանի կողմից «Մետելիցա» սրճարանում նախաձեռնած ընդդիմադիր ինտեգրման նոր ֆորմատը: Այնուամենայնիւ, եթէ վերջնական առումով այդ ձեւաչափի մասնակիցները որոշեն համախմբուել հենց Տէր-Պետրոսեանի շուրջ, ապա ՀՀ առաջին նախագահի թիմը նոյնպէս կ՚ստացուի «աջաբսանդալային»: Ի դէպ, «Մետելիցայում» հանդիպած քաղաքական ուժերը նոյն յաջողութեամբ կարող են վերջնական հանգրուան գտնել եւ Լեւոն Տէր-Պետրոսեանին հակադրուող ընդդիմադիր բեւեռում:*

*Ի դէպ, այդ հանդիպման մասնակից ՕԵԿ-ի ներկայացուցիչ Հեղինէ Բիշարեանը, ի պատասխան այն հարցի, թէ արդեօք հնարաւոր է համագործակցութիւն իշխանական որոշ ուժերի, ասենք՝ ՀՅԴ-ի հետ, դա չբացառեց. «Նախագահական ընտրութիւնների նախաշեմին եթէ քաղաքական դաշտում կը լինեն այնպիսի փոփոխութիւններ, որ նոր ձեւաւորումներ կ՚առաջանան, այդ դէպքում ոչինչ չեմ բացառում»: Ի դէպ, ՕԵԿ-ը այժմ բաւականին պասիւ դիրք է գրաւում, ի տարբերութիւն «Ժառանգութեան» ակտիւ քայլերի չի դիմում եւ սահմանափակւում է հիմնականում լենինեան ոճով Արթուր Բաղդասարեանի գովաբանութեամբ, ինչը ոմանց ենթադրելու տեղիք է տալիս, որ ՕԵԿ-ն արդէն իսկ ընդգրկուած է ինչ-ինչ ստուերային պայմանաւորուածութիւններո:*

*Հարկ է նշել, որ ՀՅԴ-ի հետ համագործակցութեան մասին ժամանակին խօսում էր եւ Րաֆֆի Յովհաննիսեանը: Այսինքն՝ պայմանականօրէն ասած՝ հակալեւոնական բեւեռը նոյնպէս «աջաբսանդալային» պատկեր է ունենալու, եւ դժուար է ասել, թէ ով է դա գլխաւորելու: Օրինակ, եթէ Ռոբերտ Քոչարեանի լուռ համաձայնութեամբ դատական կարգով մինչեւ դիմելու պահ երկարաձգուի Րաֆֆի Յովհաննիսեանի ՀՀ քաղաքացիութիւնը, ապա նա կը կարողանայ գլխաւորել այդպիսի բեւեռ եւ ոչ պակաս յաջողութեամբ, քան ասենք Վազգէն Մանուկեանը, այդ թւում եւ ՀՅԴ-ի հետ ալեանսի տարբերակում (չմոռանանք այն ասացուածքը, որ, ոմանց կարծիքով, նախկին դաշնակցականներ չեն լինում): Բայց միաժամանակ չպէտք է բացառել եւ Րաֆֆի Յովհաննիսեանի յայտնութիւնը լեւոնական ճամբարում:*

*Այսինքն՝ նախագահական ընտրութիւններին ընդդիմութիւնը առնուազն մուտք է գործելու «աջաբսանդալային» խառը տարբերակներով, բայց միաժամանակ իշխանական ճամբարում էլ շահերի ու յարաբերութիւնների այնպիսի խառը պատկեր է, այնքան շատ են ու խուճուճ տարատեսակ ինտրիգները, որ, ինչպէս ասում են, սատանան էլ գլուխ չի հանի:*

***ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՋԵԱՆ***
***«ԻՍԿԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ»***

# ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

*«Խելօք են, էլի, խելօք». քաղաքական-սրճարանային խօսակցութիւնները վերջերս յաճախ են այսօրինակ եզրակացութիւն ունենում, եւ չակերտներում բերուած նախադասութիւնն էլ բերւում է իշխող զոյգի՝ Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի վերաբերեալ: Այսպիսի ձեւակերպումներում գնահատւում է իշխանութիւնը պահելու նշուած զոյգի ընդունակութիւնը: Իհարկէ, եթէ խօսենք իշխանութիւնը պահելու ընդունակութեան մասին, փաստերը ինքնին աւելի խօսուն են: Բայց ի՞նչ է իրականում թաքնուած այդ ընդունակութեան տակ: Ռոբերտ Քոչարեանը, որ անգամ հրապարակային է յայտարարել, որ գիրք կարդալու հետ առանձնապէս գլուխ չունի, հրապարակային միայն մէկ հեղինակի անուն է տուել՝ Մաքիավելի: Դժուար է ասել՝ ինքը կարդացե՞լ է, թէ՞ ուղղակի իրեն պատմել են, բայց այս հեղինակը իշխանութիւնը պահելու բարդ դեղատոմսեր չի առաջարկում եւ այս գործում խորհուրդ է տալիս առաջնորդուել բնազդներով: Ինչ-որ մէկը քեզ խանգարո՞ւմ է՝ սպանիր, այնքան չի խանգարում, որ սպաննես՝ գնիր, կոտրիր, վախեցրու, ունեզրկիր, շանտաժի ենթարկիր: Հնազանդներին պարգեւատրիր, բայց եւ ցոյց տուր, որ նրանք ցանկացած պահի կարող են արժանանալ անհնազանդների ճակատագրին: Սրանք, թերեւս, այն մեթոդներն են, որ կիրառուել են քոչարեանասարգսեանական Հայաստանում, եւ որոնք բնոյթով պարզ են ու հանրամատչելի, նկատի ունեմ, որ դրանք խելքի նշան հանդիսանալ չեն կարող: Բայց միւս կողմից՝ չեմ համարձակուի պնդել, թէ այսօրինակ մեթոդների կիրառումը հեշտ գործ է: Իհարկէ, սա շատ բարդ է, նոյնիսկ դժուար, բայց կապուած է ոչ թէ խելքի, ինտելեկտի, այլ արժէք համակարգի հետ: Նկատի ունեմ՝ դա պէտք է կարողանալ: Ամէն մարդ չէ, որ կը համարձակուի դիմացինին գնելու փորձ անել, ոչ թէ այն պատճառով, որ վախենում է, այլ այն պատճառով, որ չի կարող իրեն նման բան թոյլ տալ, որովհետեւ իրեն նուաստացած կ՚զգայ այդ գործով զբաղուելիս: Ոչ միայն կաշառելը, այլեւ կաշառելը փչացածութեան որոշակի մակարդակ է ենթադրում, դեգրադացիայի որոշակի աստիճան: Իսկ եթէ այդ աստիճանը հասել է իշխանութեան ամենավերին օղակներ, այստեղ արդէն պրոբլեմը շատ աւելի բարդանում է: Ինչ վերաբերում է քոչարեանասարգսեանական զոյգին, նրանք մի հարցում, այնուամենայնիւ, խելօք են գտնուել: Նրանք հասկացել են, որ Հայաստանում պէտք չէ մարդկանց վերաբերուել որպէս քաղաքացու, այլ պէտք է վերաբերուել որպէս ապրանքի, որ հեշտութեամբ կարելի է գնել եւ վաճառել: Եւ Հայաստանն էլ խաղի այդ կանոնը ընդունել է. դժուար թէ նման կանոնների դէմ բան ունենար այն հանրութիւնը, որ ամէն օր տալիք-առնելիքի մէջ է: Եւ ահա, այս պայմաններում Հայաստանում շատերը զբաղուած են սեփական ապրանքային տեսքի պահպանմամբ կամ ձեռքբերմամբ եւ սպասում են գնուելու իրենց հերթին. մէկը դա անում է ընդդիմադիր գործունէութեամբ, միւսը աւելի շուստրի ձեւեր է մտածում, բայց սրանից խնդրի էութիւնը չի փոխւում: Սակայն իրական պրոբլեմը այստեղ չէ: Պրոբլեմն այն է, որ երբ խաղի այս կանոնը համընդհանուր ընդունելի է, հակառակ մտածողները եւ հակառակ ձգտումներ ունեցողները զրկւում են իրենց տեսակի գոյութեան համար պայքարելու շանսից: Կամ էլ այդ շանսերը էականօրէն փոքրանում են: Միւս կողմից՝ փոքր շանսը նոյնպէս շանս է, եւ նրա կիրառելիութիւնը ընդամէնը կախուած է նրանից օգտուելու ցանկութիւն ունեցողների թուից:*

***ԽՄԲԱԳՐԱԿԱՆ***
***«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»***

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

# ԹԻՒ 15 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԸՆՏՐՈՒԵՑ ԽԱՉԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Թիւ 15 ընտրատարածքում կիրակի, Օգոստոս 26-ին անցկացուած Ազգային Ժողովի պատգամաւորի լրացուցիչ ընտրութիւններում յաղթել է հանրապետական, գործարար Խաչիկ Մանուկեանը:*

*Ըստ ընտրատարածքային ընտրական յանձնաժողովի ամփոփած արդիւնքների, Խաչիկ Մանուկեանը ստացել է 16121 ձայն, Թալինի քաղաքապետ, անկուսակցական Մնացական Մնացականեանը, ում սատարում էր «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը, 10067 ձայնով երկրորդ տեղում է, երրորդը Դաշնակցութեան թեկնածու Գուրգէն Շահինեանն է՝ 7248 ձայնով, «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ եւ Ազգային Ժողովի համանուն խմբակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեանը չորրորդն է՝ 1220 քուէներով: Միւս երկու թեկնածուները հաւաքել են 1000-ից պակաս ձայներ:*

*Յաղթած թեկնածուն «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հեռախօսազրոյցում յայտարարեց, որ այս անգամ, ի տարբերութիւն Մայիսի 12-ի ընտրութիւնների, այլեւս կասկածներ չեն կարող լինել իր յաղթանակի մէջ. - «Այսպիսի թափանցիկ ընտրութիւններ մենք երբեք երեւի չենք տեսել»:*

*«Հանրապետականը իմ կողքին էր, սատարում էր ինձ, եւ այս ամբողջ յաղթանակը նաեւ Հանրապետականի յաղթանակն էր», - շեշտեց Խաչիկ Մանուկեանը:*

*Այս անգամ նա մտադիր չէ հրաժարուել մանդատից, քանի որ «խանգարող հանգամանք չկայ, բոլորի համար արդէն պարզ է, բոլորը արդէն ընդունեցին»:*

*Ընտրութիւնների վերաբերեալ Րաֆֆի Յովհաննիսեանի տարածած յայտարարութիւնում, մասնաւորապէս, ասուած է. - «Ազգային Ժողովի պատգամաւորի թափուր տեղի համար թիւ 15 ընտրատարածքում երէկ անցկացուած ընտրութիւնների գործընթացն ու արդիւնքները եւս պատմութեան գիրկն անցան էապէս անազատ ու անարդար պայմաններում՝ ամենատարբեր իրաւախախտումներով եւ իշխանական լծակների չարաշահումներով: Յուսով եմ, որ հանրապետութեան ղեկավարութիւնը՝ բոլոր մակարդակներով հանդերձ, ապագայում իր պարտականութիւնները կը կատարի առաւել պարկեշտ, օրինաւոր ու ժողովրդավարդ եղանակով: Իսկ մինչ այդ՝ շնորհաւորում եմ յաղթող ճանաչուած Խաչիկ Մանուկեանին եւ մաղթում ամենայն բարիք 15-րդ ընտրատարածքի մեր հայրենակիցներին անձնուիրաբար ծառայելու պատուաբեր առաքելութեան մէջ»:*

*Րաֆֆի Յովհաննիսեանը Ազգային Ժողովի պատգամաւոր է ընտրուել համամասնական ընտրակարգով, սակայն թիւ 15 ընտրատարածքի լրացուցիչ ընտրութիւններում առաջադրուել էր նաեւ մեծամասնականով:*

*Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններում թիւ 15 ընտրատարածքում Խաչիկ Մանուկեանը ձայների ոչ մեծ առաւելութեամբ յաղթել էր Մնացական Մնացականեանին, սակայն յետոյ հրաժարուել էր մանդատից՝ իր քայլը այսպէս պատճառաբանելով. - «Քանի որ շրջանառւում են լուրեր, թէ տեղի են ունեցել խախտումներ, ճնշումներ եւ այլն, այդ ամէնին վերջ տալու համար ես ինքս որոշում եմ կայացրել, որպէսզի նոր ընտրութիւններ տեղի ունենան»:*

# ԱՐՄԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ ԿԱՊՈՒՄ Է ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՇՈՒՐՋ ՅԱՄԱԽՄԲՈՒԵԼՈՒ ՅԵՏ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի անկախութեանը նետուած մարտահրաւէրներին դիմակայելու, արմատական իշխանափոխութեան խնդիրը Հայոց Համազգային Շարժման վարչութեան անդամ Արամ Մանուկեանը կապում է երկրի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ համախմբուելու հետ:*



ՀՀՇ վարչութեան անդամ Արամ Մանուկեան

*«Եթէ կը ստացուի՝ ես շատ ուրախ կը լինեմ: Ոչ թէ Լեւոն Տէր-Պետրոսեանի համար, ոչ թէ Հայոց Համազգային Շարժման համար: Հայոց Համազգային Շարժումը այս շարժման մէջ, Աստուած տայ այն իրականացուի, կը լինի մի մասը՝ միգուցէ ակտիւ մասը, միգուցէ մի քիչ կենտրոնում, բայց շարքի մէջ կը լինի մէկը», - յայտարարեց Մանուկեանը մամլոյ ասուլիսում:*

*ՀՀՇ-ի ղեկավար անդամը վստահեցրեց, որ Տէր-Պետրոսեանը «չի լինելու Հայոց Համազգային Շարժման նախագահը». - «Եթէ նա ընտրուեց, առաջադրուեց՝ լինելու է բազմաթիւ կուսակցութիւնների, բազմաթիւ քաղաքական ուժերի առաջադրումով եւ նրանց աջակցութեամբ: Նա լինելու է Հայաստանի Հանրապետութեան նախագահը»:*

*Ասուլիսի ժամանակ Արամ Մանուկեանը համոզմունք յայտնեց, որ անկախ պետութեան հիմնասիւները, որոնք Խորհրդային Միութեան փլուզումից մօտ մէկուկէս տարի առաջ՝ 1990 թուականի Օգոստոսի 23-ին, դեռ Խորհրդային Հայաստանի Գերագոյն խորհուրդը ամրագրեց Անկախութեան Հռչակագրով, առաջին երեք տարում արդէն դրուած էին. - «Սեփական դրամը, մաքսային համակարգը, զինուած ուժերը, պաշտպանական համակարգը, կուսակցութիւնները, ազատ մամուլը՝ դրանք բոլորը անշրջելի են, կատարուած են, եւ վերջնական կատարուած են: Այլ բան է, թէ ինչքանո՞վ են նրանք իրենց առաքելութիւնը, գործառոյթը իրականացնում: Այստեղ մենք կաղում ենք, կաղում ենք շատ, գնալով այդ կաղալը շատանում է»:*

*Մանուկեանը, որ 17 տարի առաջ խորհրդարանում ընթերցել էր Անկախութեան Հռչակագիրը, յայտարարեց նաեւ, թէ այն ժամանակ անկախութեանը դէմ էին միայն կոմունիստները եւ դաշնակցականները:*

# ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ ՌՈՒԲԷՆ ԹՈՐՈՍԵԱՆԻՆ

*«Գերագոյն խորհուրդ պատգամաւորական ակումբ» ՀԿ նախագահ Ռուբէն Թորոսեանը Օգոստոսի 26-ին տարածել է հաղորդագրութիւն, ուր նշում է նոյն օրն իր հանդէպ կատարուած ահաբեկութեան մասին:*

*«Այսօր, ժամը 16.30-ի մօտերքում, Նոր-Նորքի 2-րդ մասից Ջրվէժ տանող ճանապարհին, առանց պետհամարանիշների, մթեցուած ապակիներով 2 մեքենայ կանգնեցրին իմ ավտոմեքենան: Մեքենայում էր նաեւ տղաս, որին տուն էի բերում մանկապարտէզից:*

*Մեքենաներից մէկը մօտեցաւ մեր մեքենային եւ իջնող ապակիներից մէկից կիսածածկուած մի դէմք ինձ ուղղեց հետեւեալ բառերը՝ «զգոյշ եղիր, եթէ այդպէս շարունակես, վերջդ լաւ չի լինի» եւ 2 մեքենաներն էլ հեռացան», ասուած է Թորոսեանի տարածած հաղորդագրութեան մէջ:*

*Իրաւապաշտպանը ենթադրում է, որ կատարուածն առնչւում է «Ընտրախախտների, զինծառայութեան եւ քաղբանտարկեալների մասին» օրեր առաջ տարածած իր յայտարարութեանը:*

*«Առաջին անգամ չէ, որ իմ մօտեցումները այդ խնդիրների վերաբերեալ որոշ բարձրաստիճան պաշտօնեաների կողմից նմանատիպ «մտահոգութեան» են արժանանում:*

*Ահաբեկչութեան սոյն փորձի կապակցութեամբ, յայտարարում եմ.*



«Գերագոյն Խորհուրդ» կազմակերպութեան նախագահ Ռուբէն Թորոսեան

*Ես շարունակում եմ 2003 եւ 2007թ.թ. ընտրութիւնների ապօրինութիւնների հետեւանքների վերացման ուղղութեամբ իմ նախաձեռնութիւնները միջազգային կառոյցներում, այդ թւում, քաղբանտարկեալների իրաւունքների պաշտպանութեան ուղղութեամբ: Առայժմ, ձեռնպահ մնալով որեւէ մէկին վերագրելու կատարուածի պատասխանատուութիւնը, միաժամանակ, գտնում եմ, որ Հայաստանում նմանատիպ «միջոցառումները» խթանող պայմանների համար ողջ պատասխանատուութիւնը կրում են ապօրինի ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուած իշխանութիւնները», ասուած է Ռուբէն Թորոսեանի տարածած հաղորդագրութեան մէջ:*

# ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ« ՕՐԻՆԱԳԻԾ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Ժառանգութիւն» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեան Օգոստոս 28-ին Հայաստանի Ազգային Ժողովում ներկայացրել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ճանաչելու մասին» օրէնքի նախագիծը:*

*Օրինագիծը ունի ընդամէնը երկու յօդուած՝ «Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը», եւ «սոյն օրէնքն ուժի մէջ է մտնում պաշտօնական հրապարակման պահից»:*

*«Ժառանգութեան» օրէնսդրական այս առաջին նախաձեռնութիւնը՝ պատշաճ կարգով ընդունուելուց, ստորագրուելուց եւ ուժի մէջ մտնելուց յետոյ, կ'ապահովի Հայաստանի կողմից երկար սպասուած տէ ժուրէ ճանաչման տարածումը 1991 թուականին միջազգային եւ խորհրդային օրէնքներին համապատասխան Ստեփանակերտում հիմնադրուած տէ ֆակտօ ինքնիշխան պետութեան վրայ», - ընդգծում է կուսակցութիւնը իր տարածած հաղորդագրութիւնում:*

*«Օրէնքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետութեան կողմից իրաւամբ կը ճանաչուի Արցախի փաստացի կարգավիճակը՝ ելնելով նրանից, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը բաւարարում է ինքնիշխան պետութեան համար միջազգային օրէնքի բոլոր նախապայմանները», - ասուած է, մասնաւորապէս, օրէնքի ընդունման հիմնաւորման մէջ: - «Օրէնքը հիմք կը հանդիսանայ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնների՝ ԼՂՀ-ի պաշտօնական ճանաչումից ծագող յարաբերութիւնները կարգաւորելու, Արցախի անվտանգութիւնն ապահովելու եւ ամրապնդելու գործում ՀՀ-ի իրաւունքներն ու պարտականութիւնները որոշակիացնելու, Հայաստանի ազգային շահն ու պետական քաղաքականութիւնը սահմանելու, յետհակամարտեան վերականգնման աշխատանքներին Հայաստանի մասնակցութեան համար»:*

*Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ճանաչելու առաջարկով Րաֆֆի Յովհաննիսեանը հանդէս է եկել նաեւ որպէս Հայաստանի Հանրապետութեան առաջին արտգործնախարար պաշտօնավարութեան ժամանակ:*

*Ատրպէյճանի արտգործնախարարութիւնը արձագանքել է «Ժառանգութեան» նախաձեռնութեանը, «Թրենդ» լրատուական գործակալութեան փոխանցմամբ, Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարութեան մամլոյ խօսնակ Խազար Իբրահիմը դատապարտել է Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնը ճանաչելու մասին օրէնքի նախագիծը Հայաստանի Ազգային Ժողով ներկայացնելու՝ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեանի նախաձեռնութիւնը:*

*«Ատրպէյճանի տարածքը որպէս իրենցը ճանաչելու փոխարէն, Հայաստանի ընդդիմութիւնը լաւ կ'աներ՝ ճանաչէր իր սխալները եւ չկրկներ դրանք», - յայտարարել է Իբրահիմը:*

# ԼՈՒՐԵՐ

## ԹՈՒՑԻԿՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՄԻՋԱԴԷՊ՝ ՆԱԵՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ




*Տեսարան՝ Երեւանի Ազատութեան հրապարակի վրայ Համահայկական խաղերու փակման արարողութենէն*

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Կիրակի, Օգոստոս 26-ի երեկոյեան Երեւանի Ազատութեան հրապարակում Համահայկական խաղերի փակման արարողութեան ժամանակ կրկին Թռուցիկների հետ կապուած միջադէպ է գրանցուել: Իրաւապահները կանխել են Թռուցիկներ բաժանելու՝ Մայիսի 12-ին ոստիկանութեան բաժանմունքում վիճայարոյց հանգամանքներում մահացած Լեւոն Գուլեանի հարազատների փորձը:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց «Այլընտրանք» հասարակական քաղաքական նախաձեռնութեան համախոհ Վարդգէս Գասպարեանը, ինքը եւ Լեւոն Գուլեանի հարազատները փորձել են Թռուցիկներ բաժանել՝ հետեւեալ բովանդակութեամբ. - «Երկու երեխաների հայր, 31-ամեայ Լեւոն Գուլեանը՝ Երեւանի բնակիչ, Մայիսի 12-ին մահացաւ ոստիկանութիւնում: Վերջին տարիներին աւելի քան մէկ տասնեակ մարդ է մահացել ոստիկանութեան բաժանմունքներում: Ո՞վ է յաջորդը»:

Մի քանի րոպէ անց, սակայն, ըստ Լեւոն Գուլեանի քրոջ՝ Արմինէ Գուլեանի, իրենց են մօտեցել իրաւապահ մարմինների աշխատակիցներ, խլել են իրենց ձեռքում եղած Թռուցիկները եւ պահանջել յանձնել պայուսակում առկայ Թղթերը:

«Մենք ասացինք՝ դուք իրաւունք չունէք մտնել մեր պայուսակները», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում պատմեց Արմինէ Գուլեանը. - «Ասացին՝ այդ դէպքում դուք պէտք է ինքնակամ յանձնէք Թռուցիկները, հակառակ դէպքում՝ ձեզ կը տանենք բաժանմունք»:

Արմինէ Գուլեանի խօսքով, իրենց մօտեցած իրաւապահները պնդել են, Թէ առաջին անգամ են լսում Լեւոն Գուլեանի մահուան եւ նրա հարազատներին յուզող փաստերի մասին: Ու Թէեւ Գուլեանի հարազատները յայտարարել են, Թէ իրականացնում են ազատ արտայայտուելու իրենց սահմանադրական իրաւունքը՝ իրաւապահ մարմինները տեղի չեն տուել. -«Ասում էին, Թէ մենք իրաւունք չունենք այստեղ Թռուցիկ բաժանել, քանի որ վարկաբեկում ենք ոստիկանութիւնը: Վերցրին բոլոր Թղթերը եւ առաջարկեցին բանաւոր պատմել դրանց բովանդակութիւնը», - ասաց Արմինէ Գուլեանը:

Նոյնպիսի միջադէպ էր գրանցուել նաեւ Համահայկական խաղերի բացման արարողութեան ժամանակ՝ Հանրապետական մարզադաշտում: Այս անգամ էլ իրաւապահ մարմինները բռնութիւն էին կիրառել եւ բերման ենԹարկել «Ի պաշտպանութիւն քաղբանտարկեալների» նախաձեռնող խմբի անդամներին, ովքեր փորձել էին բաժանել Թռուցիկներ՝ «Հայ կամաւորականների համախմբման» ղեկավար անդամներ Ժիրայր Սեֆիլեանին եւ Վարդան Մալխասեանին, Հայաստանի նախկին արտգործնախարար, «Քաղաքացիական անհնազանդութիւն» շարժման նախաձեռնող Ալեքսանդր Արզումանեանին եւ «Ժամանակ Երեւան» Թերթի խմբագիր Արման Բաբաջանեանին ազատ արձակելու կոչերով:

## ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՒԱՔԸ

*ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»:* Ընդդիմադիր լիդերների հերԹական հաւաքը, որի մասին այդքան երկար խօսում էր ԱԻՄ առաջնորդ Պարոյր Հայրիկեանը, Օգոստոս 28-ին վերջապէս կայացաւ «Կոնգրէս» հիւրանոցում:

Ժամը 16-ին նախատեսուած հանդիպումը որոշ ընդդիմադիրների համար սկսուեց աւելի շուտ. մասնաւորապէս, ՕԵԿ առաջնորդ Արթուր Բաղդասարեանն ու ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը մինչեւ միւս ընդդիմադիրների ժամանելը նստած էին հիւրանոցի մօտ գտնուող «Ծիծեռնակ» սրճարանում՝ բաւականին համեստ սեղանի շուրջ:

Ուղիղ ժամը չորսին հերԹով սկսեցին ժամանել ընդդիմադիր լիդերները: Առաջինը եկաւ ՍԴՀԿ առաջնորդ Լիւդմիլա Սարգսեանը: «Տեսնենք՝ ինչ ընԹացք կ'ստանայ. եԹէ համախմբման տենդենց կայ, կը շարունակենք մասնակցել, եԹէ՝ չէ, ուրեմն դրանով ամէն ինչ կ'աւարտուի»,- հանդիպումից առաջ ասաց տիկին Սարգսեանը: Ինչ վերաբերում է նրան, որ ՍԴՀԿ-ն արդեն իսկ որոշել է առաջիկայ նախագահական ընտրուԹիւններում պաշտպանել Լեւոն Տէր-Պետրոսեանի ԹեկնածուԹիւնը, ապա ՍԴՀԿ առաջնորդը յայտարարեց, Թէ ինքը կողմնակից է իւրաքանչիւրին, ով կարող է իր վրայ նման պարտաւորուԹիւն ստանձնել եւ դառնալ միասնական Թեկնածու: «Այսօրուայ դրուԹեամբ ես տեսնում եմ Տէր-Պետրոսեանին, չի բացառւում, որ հետագայում կարող է մէկ ուրիշը շատ աւելի արտայայտուած միասնական լիդեր դառնալ»,- նշեց նա:

Յաջորդը ժամանեց «Ազգային ՄիաբանուԹիւն» կուսակցուԹեան նախագահ Արտաշէս Գեղամեանը: Վերջինս, սակայն, կարճ կապեց: «Շատ լաւ ակնկալիքներ ունեմ»,- միայն ասաց նա:

Հաւաքին մասնակցելու եկաւ նաեւ ԱԺԿ առաջնորդ Շաւարշ Քոչարեանը: Թէ ի՞նչ ակնկալիքներ ունէր այդ հանդիպումից պարոն Քոչարեանը, պարզել չյաջողուեց: »Ես ձեզանից շատ աւելի քիչ բան գիտեմ«,- միայն ասաց նա:

Ամենավերջում եկան Ս. Դեմիրճեանն ու Ա. Բաղդասարեանը: ՕԵԿ առաջնորդը առանց մի բառ ասելու մտաւ հիւրանոց, Ս. Դեմիրճեանն էլ ասաց միայն, Թե յետոյ կը խօսի:

Հանդիպումը տեւեց ուղիղ մէկ ժամ եւ հինգ րոպէ: Թէ կոնկրետ ի՞նչ էին խօսում ներսում, դժուար է ասել: Միայն ժամանակ առ ժամանակ լսւում էր, Թէ ինչպէս էր ՍԴՀԿ առաջնորդը վիճում. պարզ չէր՝ կոնկրետ ինչ-որ մէկի՞, Թէ՞ բոլորի հետ: Պակաս բորբոքուած չէր նաեւ Ա. Գեղամեանը: Մնացածները կարծես աւելի հանգիստ էին. եԹէ հաշուի չառնենք այն, որ հանդիպման վերջին մօտ հասցրեց բորբոքուել նաեւ ԺՈւԿ առաջնորդը:

«Որեւէ արտառոց բան չկար. պայմանաւորուեցինք շարունակել հանդիպումները»,- հանդիպումից յետոյ ասաց Ա. Բաղդասարեանը:

«Կոնսուլտացիաներ են, դրանք տարւում են նաեւ այլ ուժերի հետ: Պայմանաւորուել ենք, որ կը շարունակենք»,- յայտարարեց Ս. Դեմիրճեանը:

Լ. Սարգսեանը չեշտեց, Թէ ինքը ոչ Թէ վիճում, այլ բանավիճում էր բոլորի հետ: «Քննարկում էր գնում, աւելի կոնստրուկտիւ քայլերի ենք գնում, համախմբման պրոցէս է»,- նշեց ՍԴՀԿ առաջնորդը: Մ. Գասպարեանը յայտարարեց, Թէ որոշուել է բոլորի հետ երկկողմանի հանդիպումներ ունենալ՝ միասնական Թիմ ստեղծելու համար:

Ա. Գեղամեանը ինչպէս գալուց, այնպէս էլ գնալիս հեռացաւ առանց մի բառ ասելու: Իսկ այս ամէնի նախաձեռնող Պարոյր Հայրիկեանը նշեց, Թէ պայմանաւորուել են աշխատել միասին. «ՄտահոգուԹիւնները միասնական են, եւ դրանից բխեց միասնական Թիմով աշխատելու ցանկուԹիւնը«: Հարցին, Թէ ե՞րբ են նախատեսում հանդիպել յաջորդ անգամ, Հայրիկեանը պատասխանեց՝ սրանից յետոյ ամէն օր:

Հանդիպմանը չէին մասնակցում »ՀանրապետուԹիւն, ՀՀՇ, «ԺառանգուԹիւն» կուսակցուԹիւնները:

## ԱԼԻ ԱՍԼԱՆ. «ԱՄԵՐԻԿԱՑԻ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ԲԱՌԸ ՉԵՆ ԱՐՏԱՍԱՆՈՒՄ, ԲԱՅՑ ՀԱՄՈԶՈՒԱԾ ԵՆ, ՈՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՂԵԼ Է»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Ամերիկացի պաշտօնեաները հրապարակայնօրէն «ցեղասպանուԹիւն» բառը չեն արտասանում, բայց համոզուած են, որ ցեղասպանուԹիւն եղել է: Նման կարծիք է յայտնել «Զաման» ԹերԹի մեկնաբան Ալի Ասլանը:

«Թէեւ գործադիր իշխանուԹեան ներկայացուցիչները հոգու խորքում համաձայն են, որ հայերը ցեղասպանուԹեան են ենԹարկուել, նրանք հրաժարւում են այն այդպէս կոչել, որովհետեւ դա «ապակառուցողական» է: Այս դէպքում նրանց համար խաղասեղանին է մի կարեւոր հանգամանք՝ չխրտչեցնել Թուրքերին եւ չվնասել ԱՄՆ-ի շահերին Թուրքիայում: ԱՄՆ-ի համար այսօր արտաքին քաղաքականուԹեան երեք կարեւորագոյն ուղղուԹիւնները՝ Իրաք, Իրան եւ Աֆղանստան, պահանջում են Թուրքիայի շարունակական համագործակցուԹիւնը», - փաստում է մեկնաբանը:

«Ում հետ էլ ես խօսել եմ Ուաշինգտոնում, բոլորն ասել են, որ վաղ Թէ ուշ Հայոց ՑեղասպանուԹեան բանաձեւն անցնելու է: Դա ընդամէնը ժամանակի եւ պատեհուԹեան հարց է: Բարեբախտաբար, այն լուրջ հիմնախնդիրները, որոնք ծառացած են ԱՄՆ-ի առջեւ մեր տարածաշրջանում, աւելի անպատեհ են դարձնում ամերիկացի քաղաքական գործիչների համար բանաձեւի վերջնական ընդունումը: Չի կարելի բացառել, որ «ազգային շահերի» եւ «ազգային անվտանգուԹեան» փաստարկները կրկին կը գերակայեն»:

Այնուհանդերձ, Թուրք մեկնաբանը եզրակացնում է. - «Վաղ Թէ ուշ մենք, հաւանաբար, տանուլ կը տանք ճակատամարտը Գոնկրէսում: Երեւի այժմ ժամանակն է նախապատրաստելու Թուրք հանրուԹեանը աւելի բացասական ելքերի եւ մշակելու աւելի լաւ ռազմավարուԹիւն, այլ ոչ Թէ կառչելու հին մարտավարուԹիւնից»:

## ՍՊԱՆՆՈՒԱԾ Է ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԸ

*Շարունակուած էջ 1-էն*

մարզի դատախազի տեղակալը, 2006 Թուականի Մարտէն ասդին մարզի դատախազն էր:

«Առաւօտ» օրաԹերԹը, փոխանցելով սպանուԹեան նախօրեակին մարզէն ներս տիրող իրավիճակի մասին վանաձորցիներու գնահատականը կը նկարագրէ Թէ, Լոռիի մարզէն ներս պետական համակարգը բաժնուած է առանձին բանակներու, որոնցմէ ամէն մէկը կը փորձէ իր ազդեցուԹիւնը տարածել միւսի վրայ: Ժամանակէ մը ի վեր մարզէն ներս՝ դատախազուԹիւն-ոստիկանուԹիւն, դատախազուԹիւն-մարզպետարան, դատախազուԹիւն-քաղաքապետարան լուրջ հակասուԹիւններ գոյուԹիւն ունեցած են: Երբ Թափուր մնացած էր Շիրակի մարզպետի պաշտօնը, վարչապետ Սերժ Սարգսեան Ալբերտ Ղազարեանին առաջարկած էր դառնալ մարզպետ, քանի որ վերջինս ծնունդով նոյն մարզէն է: Դատախազը վարչապետի առաջարկին չէ համաձայնած պատճառաբանելով, Թէ ինքը Գիւմրիի քաղաքապետ Վարդան Ղուկասեանի հետ չի կրնար աշխատիլ:

Ըստ ԹերԹի վանաձորեան աղբիւրներուն, վարչապետ Սերժ Սարգսեան փորձած էր վերջ դնել մարզէն ներս պետական չինովնիկներու միջեւ՝ իրար նկատմամբ ատելուԹեան, քանի որ նախագահական ընտրուԹիւններէն առաջ ՀՀ վարչապետին ձեռնտու չէր անոնց միջեւ հակասուԹիւններու ընդլայնումը:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

# «ԵԹԷ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾ ՉԵՆ՝ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԽՕՍԵԼ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

*Ազգային ժողովի Հանրապետական խմբակցութեան ղեկավար Կարէն Կարապետեանը բացառիկ հարցազրոյց է տուել «Ազատութիւն» ռադիոկայանին: Ստորեւ ներկայացնում ենք հարցազրոյցը.*

Հարց. - Թիւ 15 ընտրատարածքում, նախնական տուեալներով, յաղթել է հանրապետական՝ Խաչիկ Մանուկեանը: Ինչպէ՞ս էք գնահատում, եւ արդեօք տեղեկութիւններ ունէ՞ք քուէարկութեան ընթացքի հետ կապուած:

***Կարէն Կարապետեան.*** *- Նախ, ուրախալի է այդ փաստը, եւ շնորհաւորում եմ Խաչիկ Մանուկեանին: Կարծում եմ, ընտրարշաւը եղել է բաւական կոռեկտ, եւ նորմալ պայքարում յաղթել է Հանրապետական կուսակցութեան թեկնածուն:*

Հարց. - Տարօրինակ չէ՞՝ պատգամաւորը պաշտօնական արդիւնքներով ընտրուել էր եւ մանդատից հրաժարուեց, ապա նորից ընտրուեց:

***Կարէն Կարապետեան.*** *- Բացի այն, որ մենք թիմային սկզբունքների շրջանակներում պէտք է գործենք, ընդհանրապէս, նաեւ իւրաքանչիւր պատգամաւոր ունի իր նախասիրութիւնները, իր մօտեցումները: Եւ եթէ նա այդպէս է գտել, որ ինքը պէտք է հրաժարուի եւ նորից մտնի պայքարի մէջ՝ ես ընդամէնը ողջունում եմ:*

Հարց. - Լոռու դատախազի սպանութիւնը ինչպէ՞ս էք գնահատում եւ ունէ՞ք արդեօք ձեր վարկածները:

***Կարէն Կարապետեան.*** *- Մենք անձնական լուրջ յարաբերութիւնների դաշտում էինք, եւ ինձ համար շատ ցաւալի է այդ դէպքը: Ես կարծում եմ, որ իրաւապահները պէտք է ամէն ինչ անեն, որպէսզի այդ յանցագործութիւնը բացայայտուի: Դատախազական մարմինները եթէ պաշտպանուած չեն այսօր երկրում՝ չի կարելի խօսել այն սովորական անձանց մասին, որոնց իրաւունքները պէտք է պաշտպանուեն: Ես կարծում եմ, որ նման գործերի չբացայայտումը կը բերի է՛լ աւելի վատ հետեւանքների:*

Հարց. - Դուք ունէ՞ք ձեր վարկածները:

***Կարէն Կարապետեան.*** *- Դա բացառապէս իրաւապահների գործն է, ես չեմ ուզում անգամ շատ ինֆորմացիա ունենալ նման թեմաների վերաբերեալ: Եթէ մինչեւ օրս իրաւապահները որեւէ յայտա-*



*բարութիւն չեն արել, ես ընդամէնը եզրակացնում եմ, որ դեռեւս իրենք իրենց հանգուցալուծումը չունեն: Եւ ես կարծում եմ, շատ օպերատիւ իրենք պէտք է աշխատեն, որպէսզի այդ գործը բացայայտուի:*

Հարց. - Մօտենում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանը: Ի՞նչ տրամադրութիւններ ունի Հանրապետականը, եւ արդեօք կա՞ն հարցեր, որ, կարծում էք, անպայման պէտք է օրակարգում ընդգրկուեն ու հենց առաջին քառօրեայում քննարկուեն:

***Կարէն Կարապետեան.*** *- Հանրապետականի տրամադրութիւնը շատ բարձր է, ես կ՚ասէի՝ մարտական:*

Հարց. - Ո՞ւմ հետ էք կռուելու:

***Կարէն Կարապետեան.*** *- Մարտական՝ չի նշանակում, որ մենք մարտ ենք վարելու: Ընդամէնը տարին աւարտուելուց յետոյ մենք նոր փուլ ենք մտնում՝ նախընտրական փուլ, եւ դիրքաւորւում ենք, բացխսաւորւում ենք, ուսումնասիրում ենք մեր ռեսուրսները, որպէսզի այդ պրոցէսը կանոնակարգուած եւ տրամաբանուած տանենք եւ հասցնենք տրամաբանական աւարտին:*

*Ինչպիսի օրէնքներ՝ կառավարութեան հետ համագործակցուած օրէնքներ, ահա արդէն իսկ շրջանառութեան մէջ դրուած են: Կարեւորում եմ նաեւ 2006 թուականի բիւջէի կատարողականը, որը Սեպտեմբերի 3-ից քննարկման առարկայ պէտք է դառնայ:*

Հարց. - Սեպտեմբերի կէսերին, ամենայն հաւանականութեամբ, Դաշնակցութեան գերագոյն ժողովը տեղի կ՚ունենայ: Հնարաւո՞ր է, որ երբ Դաշնակցութիւնն իր թեկնածուին յայտարարի, արդէն խորհրդարանական համագործակցութիւնը չստացուի երկու ուժերի միջեւ:

***Կարէն Կարապետեան.*** *- Չեմ կարծում, որ այդպիսի պրոբլեմներ մենք ունենանք: Շատ ցանկալի կը լինէր, որպէսզի կոալիցիոն ուժերը եւ համաձայնութեան դաշտում գտնուող ուժերը միասնական թեկնածուով հանդէս գային: Սակայն եթէ անգամ Դաշնակցութիւնը առաջադրում է իր թեկնածութիւնը՝ որեւէ արտառոց բան չեմ տեսնում: Կուսակցութիւնը, որը ունի որոշակի փորձառութիւն, թող փորձի իր ուժերը: Մենք համարում ենք մեր ուժերը լրիւ բաւարար:*

Հարց. - Ռոբերդ Քոչարեանի եւ վարչապետ Սերժ Սարգսեանի միջեւ յարաբերութիւնները լարուա՞ծ են:

***Կարէն Կարապետեան.*** *- Տաս տարի է, թերեւս, ինչ իրենք իշխանութեան տարբեր հեծանների դաշտում են, եւ տաս տարի անընդմէջ լսում ենք այդ խօսակցութիւնները: Ես ընդամէնը մէկ բան կարող եմ ասել, որ մարդիկ, որոնք անցել են պատերազմի թոհուբոհով՝ իրենց յարաբերութիւնները նաեւ պայմանաւորուած են այդ անցեալով, եւ բազմաթիւ թելերով իրենք կապուած են: Թերեւս, յօրինուած են, մեղմ ասած, այդ լուրերը, որ պտտւում են:*

Հարց. - Ձեր կարծիքով, Քոչարեանը նախագահի ընտրութիւններից յետոյ որտե՞ղ պէտք է լինի:

***Կարէն Կարապետեան.*** *- Դա, կարծում եմ, իր որոշման հարցն է:*

Հարց. - Մամուլը, այնուամենայնիւ, գրում է, որ Հայաստանում գործող ռուսական ընկերութիւնները կարող են միաւորուել, եւ դրանք միաւորուած վիճակում կը ղեկավարի Ռոբերդ Քոչարեանը՝ ընտրութիւններից յետոյ: Դուք դա տրամաբանակա՞ն էք համարում:

***Կարէն Կարապետեան.*** *- Նման հիմքեր դեռեւս չեմ տեսնում:*

Հարց. - Իսկ վարչապետ բացառւո՞ւմ է: Նախագահ Սերժ Սարգսեանի վարչապետը:

***Կարէն Կարապետեան.*** *- Դա իրենք պէտք է որոշեն, իրենց որոշման հարցն է:*

Հարց. - Կան տեղեկութիւններ, թէ Սերժ Սարգսեանը նախագահ ընտրուելու դէպքում կը կամենար ներկայումս Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսեանին տեսնել վարչապետ: Արժանահաւա՞տ են այդ տեղեկութիւնները:

***Կարէն Կարապետեան.*** *- Նման ինֆորմացիայի ես չեմ տիրապետում:*

***ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ***

# ԺԱՌԱՆԳՈՐԴԻ ՆԵԱՐԴԵՐԸ ՉԵՆ ԴԻՄԱՆՈՒՄ

***ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ***

*Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի միջեւ այսօր իսկապէս կատաղի պայքար է ընթանում: Ընդ որում, դա թշնամիների միջեւ պայքար չէ: Բնութեան օրէնքներն են այդպիսին: Ցանկացած ընտանիքում գալիս է պահ, երբ որդին պիտի ստանձնի գերդաստանի ղեկավարման դերը, եւ այդ դէպքում, որպէս կանոն, ընտանիքի նախկին հայրը երկու տարբերակ ունի. կամ պիտի դառնայ ընտանիքի «սիւն» եւ ծերունու իր դիրքերից շարունակի ղեկավարել ընտանիքը, կամ պիտի դառնայ անպէտք ծերուկ ու բաւարարուի գարշահոտ ամանով ամէն օր իրեն տրուող մի ափսէ լափով: Քոչարեանը, բնականաբար, չի ցանկանում բաւարարուել մի ափսէ լափով, բայց պրոբլեմն այն է, որ Սերժն էլ իր հերթին չի ցանկանում գլխից վերեւ «ակսակալ» ունենալ:*

*Իսկ ի՞նչ պիտի անի Սերժ Սարգսեանը՝ Հայաստանում իրական իշխանութիւն ձեռք բերելու համար: Առաջին հերթին պիտի ամրապնդի սեփական ֆինանսատնտեսական եւ քարոզչական յենարանները: Բայց քանի որ Հայաստանի ողջ տնտեսութիւնը եւ էլեկտրոնային բոլոր լրատուամիջոցները վաղուց գտնւում են Քոչարեանի անմիջական ենթակայութեան տակ, Սերժին մնում է այդ ամէնը պարզապէս խլել Քոչարեանից: Եւ բնականաբար, առաջին հերթին հարուածի տակ են ընկնում այն կառոյցները, որոնք թէեւ ընդհանուր առմամբ հաւատարիմ են եղել իշխանութիւններին, բայց առանձնապէս ջերմ զգացմունքներ չեն տածել Սերժ Սարգսեանի նկատմամբ եւ նրան ընկալել են սոսկ որպէս Քոչարեանի իշխանութեան «անցանկալի հետեւանք» (պոբոչնի էֆֆեկտ):*

*Ինքնին հասկանալի է, որ որպէս Քոչարեանի թիւ մէկ քաղաքական յենարան ընկալւում է այն ամէնը, ինչն անմիջականօրէն կապուած է Քոչարեանի աշխատակազմի ղեկավար Արմենչիկի հետ: Այլ կերպ ասած, եթէ Սերժ Սարգսեանն իսկապէս նպատակ ունի զաւթել Քոչարեանի աթոռը, պիտի առաջին հերթին խլի Արմենչիկի*

*Շար.ը էջ 19*



ՍԴՀԿ 120-ԱՄԵԱԿ

# ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆԻԿՈՍԻԱՅԻ ՄԷՋ

Այս օրերուն, աշխարհի տարբեր ափերու վրայ հայութիւնը առհասարակ եւ սփիւռքահայութիւնը՝ ի մասնաւորին, կ'ոգեկոչէ Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ Հնչակեան Կուսակցութեան Քսան կախաղաններուն նահատակութեան յիշատակը: Ոգեկոչման այդ հանդիսութիւններուն վրայ այս տարի կ'աւելնար նոր ոստան մը:

Արդարեւ, Ս.Դ.Հ. Կուսակցութեան Կիպրոսի Շրջանի Վարիչ Մարմնին շնորհիւ կիպրահայութիւնը առաջին անգամ ըլլալով պիտի հաղորդուէր քսաններու պատգամով: Բարեբաստիկ այս հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ս.Դ.Հ.Կ. Կիպրոսի նորաբաց ակումբին մէջ: Վերջին տարիներուն Կիպրոսի մէջ Քսաններուն յիշատակին կը կատարուէր հոգեհանգստեան պաշտօն: Այս տարի, կիպրահայ իրականութեան մէջ առաջին անգամ ըլլալով, հոգեհանգստեան պաշտօնին զուգահեռ կիպրահայութիւնը, լիցքաւորուելու պիտի գար նաեւ Քսաններու գաղափարականով, որուն համար ալ օրուան պատգամը փոխանցելու նպատակաւ Պէյրութէն հրաւիրուած էր «Արարատ» պաշտօնաթերթի պատասխանատու խմբագիր ընկեր Ահարոն Շխրտըմեանը:

Շաբաթ, 16 Յունիս երեկոյեան ժամը 8:00ին, ի ներկայութիւն հայ քաղաքական երեք կուսակցութիւններու, Հ.Ե.Մ.ի, Համազգայինի, Հ.Բ.Ը.Մ.ի, համայնքներու ներկայացուցիչներու եւ կիպրահայ հայորդիներու, Կիպրոսի, Հայաստանի ու Ս.Դ.Հ.Կ. քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ սկսաւ Քսաններու ոգեկոչման հանդիսութիւնը: Ձեռնարկին հանդիսավարութիւնը եւ յանուն Կիպրոսի Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի բացման խօսքը կատարեց ընկ. Աւետիս Փօշողլեան, ան նշեց. «Ազգային-գաղափարական առումով, բացառիկ պահ մըն է, այս օրը մեզի համար, որմէ կ'ուզենք հաղորդուիլ ոչ թէ որպէս ընթացիկ դարձած աւանդութիւն, այլ՝ որպէս ուխտի վերանորոգման նուիրական շարժառիթ: Ուխտ՝ հանդէպ ազգին, հայրենիքին, գաղափարական մեր դպրոցին եւ մարդկութեան՝ վերջապէս»: Ան անդրադառնալով նահատակութեան խորհուրդին, ընդգծեց թէ քսան կախաղանները Հնչակեան կուսակցութեան սեփականութիւնը չեն բնաւ: Անոնք նոյնքան եւ աւելի կը պատկանին հայ ժողովուրդին, անոնք մեր պատմութեան մէկ մասնիկն են անտարակոյս եւ մեր ազգին լաւագոյն զաւակներէն: Ընկեր Աւետիս Փօշողլեան ըսաւ, թէ Հնչակեան քսանները հայ ժողովուրդին պատկանելուն չափ եւ աւելին կը պատկանին մարդկութեան, որովհետեւ անոնք ճշմարիտ ընկերվարականներ էին. «Հնչակեան քսան կախաղանները մեր կուսակցութեան դափնեպսակն են, քանի անոնց գաղափարական ու ազգային շաւիղէն ընթացան, կ'ընթանան եւ պիտի ընթանան սերունդներ ամբողջ: Անոնք կը մնան անշէջ փարոսներ նորահաս շարքայիններուն համար. դաստիարակներ բոլոր գաղափարանուէր երիտասարդներուն համար, որովհետեւ եղան ողջակէզներ հայ ազատագրական պայքարի արնաթաթախ բագինին», - ըսաւ ընկեր Աւետիս Փօշողլեան:

Ապա մեծ պաստառի վրայ ցուցադրուեցաւ օրուան խորհուրդին պատշաճ եւ Հնչակեան կուսակցութեան պատմութենէն քաղուած տեսասալիկ մը:

Հուսկ օրուան խորհուրդը փոխանցեց «Արարատ» պաշտօնաթերթի պատասխանատու խմբագիր ընկ. Ահարոն Շխրըմեան, որ յատկապէս այս առիթով հրաւիրուած էր Կիպրոս: Ան ողջունելով այս գնահատելի նախաձեռնութիւնը, շնորհաւորեց Կիպրոսի Շրջանի Ս.Դ.Հ. Կուսակցութեան Վարիչ Մարմնի ընկերներուն կատարած կուսակցաշէն եւ օրինակելի աշխատանքը: Ընկերը ըսաւ, թէ հնչակեանները Քսաններուն հաւաքական կերպարը խորհրդանիշ ընդունած՝ իւրաքանչիւր տարի այս օրերուն, իրենց հետ ունենալով ազգային ազատագրական պայքարի դերակատարութեան հաւատացող բոլոր հոսանքները կը խոնարհին հայրենիքի ազատութեան համար ինկած հերոսներուն յիշատակին առջեւ: Ընկեր Ահարոն Շխրտըմեան ըսաւ, թէ ինչպէս միշտ այս առթիւ եւս անհրաժեշտ է անդրադառնալ քսաններու պատմական դերին եւ աւելցուց, թէ քսաններուն յանդուգն կեցուածքն ու քաղաքական հեռատեսութիւնը այսօր եւս մեզի անհրաժեշտ են:

Ընկեր Ահարոն Շխրտըմեան անդրադառնալով մեր ազգային, հայրենական կեանքին, թուեց իրագործումներ, նաեւ կարեւոր բացթողումներ, որոնք իրագործելու համար ան շեշտեց հայապահպանման եւ ազգային միասնականութեան հրամայականը: Ան ըսաւ, թէ ազգային մարտահրաւէրներուն դէմ պատասխանատուութիւնը հաւաքական է, եւ այդ հաւաքականութեան ներդաշնակութեան մէջ կը կայանայ համաշխարհայնացումի դէմ մեր ազգային ինքնութիւնը եւ գոյութիւնը պահպանելու յաջողութիւնը: Ընկեր Ահարոն Շխրտըմեան դիտել տուաւ մեր պահանջատիրութեան դէմ միջազգային բեմի վրայ Թուրքիոյ մղած բուռն պայքարը եւ շեշտեց Սփիւռքի կազմակերպուածութեան անհրաժեշտութիւնը այս ուղղութեամբ: Յարգելի բանախօսը միաժամանակ զգուշացուց առանց Հայկական Ցեղասպանութիւնը ճանչնալու, հողային, մշակութային եւ տնտեսական փոխհատուցումներու Թուրքիոյ հետ բարեկամութեան ձեռք մեկնելու ոմանց խարդաւանքներէն. «Ս.Դ.Հ. Կուսակցութեան համար այդ հարցը սկզբունքային է եւ այս ուղղութեամբ զիջում չկայ», - շեշտեց ընկերը, աւելցնելով, որ եւրոպականանալ փափաքող Թուրքին ետին կանգնած է ցեղապաշտական ու ազգայնամոլական Թուրքիոյ իսկական դիմագիծը:



Բանախօս Ահարոն Շխրտըմեան

Իր խօսքի աւարտին ընկեր Ահարոն Շխրտըմեան փառք ու պատիւ նկատեց Քսաններու կուսակցութեան զինուորը ըլլալ, իսկ առաւել եւս փառք ու պատիւ Քսաններու դրօշը բարձր պահել պայքարի դաշտերուն վրայ: Ընկերոջ խօսքը ընդունուեցաւ խոր ծափահարութիւններով:

Այնուհետեւ, Տէր Մոմիկ Քահանայ Հապէշեան պահպանիչով կատարեց այս գնահատելի հանդիսութեան փակումը: Ներկաները սրահէն հեռացան լիացած ու գոտեպնդուած Քսաններու ոգիով ու վճռականութեամբ:

Յաջորդ օրը, Կիրակի, 17 Յունիս 2007-ի առաւօտեան Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Քսաններու նահատակութեան յիշատակին տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Իր պատգամին մէջ, Տէր Մոմիկ Քահանայ վեր առաւ հնչակեաններու հայրենասիրութեան ու զոհողութեան ոգին, շեշտելով, թէ Քսաններու սերմերը իրենց արժանաւոր ժառանգորդները ստեղծած են հայ իրականութեան մէջ այսօր:

ԹՂԹԱԿԻՑ

»ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ«
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԷՆՏԷՅԼ - ՊԸՐՊԻՆՔ - ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00






**ԳԱՂՈՒԹԱՅԻՆ**

# «ՊԱՀՊԱՆԵՆՔ ԵՒ ԶԱՐԳԱՑՆԵՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ»

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ

*ՏՕՔԹ. ԱՐԱ ԻՍԿԻԿԵԱՆ*

*Ինձանից յետոյ Քալաւա գիւղը ղեկավարում էր փոքր եղբայրս ամբողջ 15 տարի: Այսօր պարսիկ գիւղապետերը պաշտպանում են մեր շահերը, պահում են մեր եկեղեցին, գերեզմանատունը եւ այլն: Նրանք չափազանց յարգանք ունեն մեր նկատմամբ: Նախկին բնակիչներից որեւէ հայ, եթէ այցելում է նախկին հայաբնակ գիւղերը, տեղացիները մեծ յարգանքով են ընդունում եւ հիւրասիրում են առատօրէն: 2005 թուի Յունիս 17ին երբ առաջնորդ Սեպուհ Սրբազանը այցելեց Արաքի հայ համայնքին, նա այցելութիւն տուեց նաեւ մեր գիւղին: Ցաւում եմ որ ես բացակայ էի այդ օրերին, այլապէս պիտի բացատրութիւններ տայի մեր գիւղի գերեզմանատան շիրմաքարերի մասին: Այդ գերեզմանատանն են թաղուած նաեւ եւրոպացի առեւտրականներ, զօրգի վաճառականներ եւ պաշտօնական անձինք: Վերջին տարիներին տողերիս գրողը կաթուած ունեցաւ համոզուեց որ Իրանում ապրողը չի կարող այստեղի պայմանների հետ հաշտուել: Այս բոլորի համար ո՞վ է մեղաւոր: Շատերը թողնելով իրենց տունն ու գործը, լեցւում են Աւստրիա եւ այնտեղ դժուարութիւնների հանդիպելով խնդրում, աղերսում են որ այստեղից օգնեն իրենց: Հարցնող լինի, հայրենակիցներ, ինչո՞ւ թողեցիք ձեր երկիր: Ձեր երեխաներին վաղը ի՞նչ պատասխան պիտի տա՞ք: Դարերով ապրել ենք Իրանում եւ պահել ենք մեր կրօնը, լեզուն, սովորութիւնները եւ հին աւանդոյթները: Այստեղ 4-5 տարի դիմանալ եւ յարատեւել չենք կարող:*

*Այսօր մենք ունենք ազատ ու անկախ հայրենիք: Անշուշտ այնտեղ կան որոշ դժուարութիւններ եւ բարդութիւններ: Եթէ հեռանում ենք մեր բնակած երկրից, ցանկալի է որ գնանք Հայաստան: Այստեղ մեքենայացած կեանք է: Բոլորը մեքենայի տէր են: Ինքնաշարժը անհատի ոտքեր են: Եթէ չունես, գործի չես կարող գնալ: Այստեղ գացողը ամէն ինչ զերոյից պիտի սկսի: Կանայք անպայման պիտի աշխատեն: Եթէ գործ չգտնեն, ապա կիսաքաղց կը մնան: Իրանում մէկ հոգի աշխատում էր եւ 3-4 հոգի ապրում էին շատ հանգիստ: Իսկ այստեղ ամուսինները եւ ընտանիքի բոլոր անդամները պիտի աշխատեն, ապրելու համար: Այստեղ բժշկական օգնութիւնները եւ խնամքը տարեցների համար անվճար են: Բժիշկները աշխատում են որքան կարելի է շատ դեղեր նշանակել հիւանդի համար: Շատ դեղերը իրենց ծանր հետեւանքներն են թողնում դեղ ընդունողի վրայ: Եթէ մի որեւէ ցաւի համար դեղն օգտակար է մարմնի որոշ օրգանների վրայ միւս օրգաններին վնասում է: Եթէ փորձում ես հրաժարուել առատ դեղերի ընդունումից, ապա որոշ բժիշկներ սարսափեցնում են հիւանդին որ եթէ նշանակուած դեղերը չգործածես կեանքդ կը կարճուի: Զաւակները հնարաւորութիւն չունեն իրենց տարեց ծնողներին օգնելու, օժանդակելու: Որովհետեւ մեծ մասամբ հնարաւորութիւն եւ ժամանակ չունեն: Նրանք օրեկան 8-10 ժամ աշխատում են, 2-3 ժամը էլ մեքենայի ղեկի ետեւն են անց կացնում իրենց ժամանակը:*

*Հիւանդ տարեցները շատ դժուար կացութեան մէջ են, յատկապէս նրանք, որոնք միայնակ են ապրում եւ նրանց զաւակները շաբաթը մէկ անգամ հանդիպում են զանազան գնումներ կատարում եւ թողնում են հեռանում: Պատահել են դէպքեր, երբ տարեց մարդը մահացել է տանը, եւ ոչ ոք այդ մասին տեղեկութիւն չի ունեցել: Օրեր յետոյ, հարազատները լուր են առնում կատարուածի մասին: Այս է կացութիւնը սիրելի հարազատներ: Սրանք գրուած են անկեղծութեամբ: Երանելի մարդ է այն մարդը, որ մեռնում ու թաղւում է իր ծննդավայրում, իր հարազատների շիրիմների կողքին... Սա իմ պատգամն է սրտի խօսքը, Իրանում բնակուող հայերին...*


**Ձեր Ծանուցումները**
**Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680**
**F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**



**WWW.GILIGIACOLLEGE.COM**
**(818) 956 9600**
**CAMPUS**
**2361 FLORENCITA DRIVE MONTROSE, CA 91020**
**OFFICE**
**1650 FLOWER STREET, GLENDALE, CA 91201**

**Managerial Courses**
1- Office Administrator
2- Computerized Accounting
3- Administrative Assistant
4- ESL
5- Computerized Taxing
6- Medical Billing

**Design Courses**
7- Web-Site Design
8- Video & DVD Editing
9- 3-D Modeling
10- 3-D Animation
11- Graphic Design
12- Photo Editing
13- AutoCAD

**Technical Courses**
14- PC Systems Technician
15- Network Administrator
16- Desktop Publishing
17- Visual Basic programmer

**Our Dedication Is**
To educate key job skills for a better workforce performance.
To give you access to the opportunities and tools of the modern employment markets.
To support the workforce development with a sustainable education.
To improve your job performance by developing your skills.
We offer efficient course clusters for an intensive and competent training.

**We Provide State Funded Program For Employers and Employees (ETP)**
**We Accept Workers Compensation Training Vouchers**

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 10-ԻՆ

## ՊԱՏՄՈՒԱԾՔ

# ԴՐԱԽՏԻ ԵՒ ԴԺՈԽՔԻ ՄԱՍԻՆ

### ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ «ՄԱՍԻՍ»Ի ԽՄԲԱԳԻՐ ԲԺ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆԻՆ

*ՊԵՏՐՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ*

*Օրերից մի օր Քրիստոսը ցանկացաւ Երուսաղէմից Նազարէթ գնալու: Կանչեց Պետրոս առաքեալին եւ ասաց.*

*- Պետրոս, գործ շատ ունենք, անելիքներ շատ կան, վեր կաց եւ պատրաստուիր, Նազարէթ ենք գնալու:*

*Նազարէթ քաղաքը Երուսաղէմից հեռու էր մօտաւորապէս 40 քիլոմեթր: Այս կարգը սահմանեց Քրիստոսը, ելնելով հաւասարութեան սկզբունքից: Հերթական անգամ, երբ Պետրոս իջաւ եւ իր տեղը զիջեց աւանակի կողքից քայլող Քրիստոսին, վերջինս յանկարծ նկատեց, որ էշի պայտերից մէկը ընկել է: Կենդանուն չչարչարելու եւ նրան ճանապարհի դժուարութիւններից ազատելու համար, Քրիստոսը դիմեց իր աշակերտին:*

*- Վերցրու աւանակը եւ գնա մօտակայ գիւղ, պայտիր եւ վերադարձիր, ես քեզ այստեղ կը սպասեմ: Քրիստոսը տեղաւորուեց ծառի շուաքի տակ ու փակեց աչքերը: Նա այնքան յոգնած էր, որ իսկոյն ննջեց, իսկ Պետրոս վերցնելով էշի պարանը ճանապարհ ընկաւ դէպի գիւղ:*

*Շատ գնաց թէ քիչ, հասաւ գիւղ, հարցուփորձով գտաւ դարբնոցը եւ մօտեցաւ դարբինին եւ ցոյց տալով աւանակի ոտքը եւ խնդրեց պայտել այն:*

*Վարպետ դարբինը սիրով համաձայնուեց եւ պահանջեց 100 դրամ (չզարմանաք, խօսքը Հայկական արժէքազրկուած դրամի մասին չէ):*

*Պետրոսը լսելով գինը, շատ վշտացաւ, նամանաւանդ, որ մօտը մի դրամ էլ չունէր:*

*- Վարպետ գիտես այս աւանակը ումն է, - դիմեց նա դարբինին:*

*Դարբինը, որ գործի մէջ խեղդուած էր ու յաճախորդներն էլ շատ էին, զայրացած ասաց.*

*- Ախպէր, ում ուզում է թող լինի, դա ոչ մի նշանակութիւն չունի: Իմ աշխատանքի գինը 100 դրամ է եւ վերջ: Փողը տուր, գործս անեմ: Էշդ առ գնա:*

*Պետրոսը տեսնելով, որ դարբինը զիջելու տրամադրութիւն չունի, յայտնեց, որ աւանակը Քրիստոսինն է եւ նա էլ փող չունի, դրա փոխարէն նա կարող է բուժել դարբինի մօտիկ հիւանդ մարդկանցից մէկն ու մէկին կամ նրա անդամալոյծ ընկերոջը:*

*Դարբինը համոզուելով, որ Պետրոսը իրօք փող չունի եւ իրենից էլ պոկ չի գալիս, ասաց.*

*- Բարեկամ, եթէ քո ասած աւանակի տէրը իրօք այդքան շնորհներ ունի, ապա թող ինձ համար կատարի հետեւեալը, ով որ բարձրանայ այս թթենու վրայ, չկարողանայ իջնել այնտեղից, մինչեւ ես հրաման չտամ: Յետոյ ինչոր դնեմ այս տոպրակի մէջ, ինձանից բացի ոչ ոք չկարողանայ հանել:*

*Պետրոսը, տեսնելով, որ դարբինի պահանջները սատանայական բաներ, վերադարձաւ Քրիստոսի մօտ եւ պատմեց բոլորը:*

*Քրիստոսը մտածեց եւ ասաց.*

*- Իրօք որ այդ մարդու պահանջները սատանայից են ու նա չար մարդ է երեւում, բայց մենք ճանապարհ ունենք գնալու: Տար էշը եւ ասա որ իր պահանջը կը կատարուի:*

*Դարբինը հաւատաց Պետրոսի խօսքին: Էշը պայտեց եւ ճամբու դրեց: Այդ դէպքից տարիներ անցան, յետոյ մի քանի տասնեակ տարիներ գլորուեց: Ծերացած դարբինը մի օր դարբնոցը փակելու վրայ էր, մէկ էլ տեսաւ հեռուից մի ձիաւոր է գալիս ուղիղ դէպի իր արհեստանոցը: Երբ ձիաւորը մօտեցաւ, դարբինը տեսաւ նրան սեւ ձիու վրայ նստած: Դա մի սարսափելի ժանիքներով սատանայ էր, ձեռքին վահան եւ սուր, իսկ սատանայական կոտոշները ցցուած էին ականջների մօտից: Սատանան մօտեցաւ եւ սպառնալից ասաց. (նման 1937 կամ 1948 թուականների ԿԿԲի գործակալի).*

*- Ինչ ունես չունես հաւաքիր, եկել եմ քեզ տանեմ, փրկութիւն չունես: Դարբինը սարսռալով նրա տեսքից, տաս րոպէ ժամանակ խնդրեց, մինչեւ դարբնոցի, գործիքները իր տեղը դնի:*

*- Տասը րոպէն շատ է, հինգը բաւարար: Ես շտապում եմ, էլի մարդ ունեմ հետս դժոխք տանելու, արագացրու:*

*Դարբինը վախից չորացած, սկսեց արագ-արագ դասաւորել գործիքները:*

*Սատանայի աչքը ընկնում է բակում աճած թթենու վրայ՝ հասուն պտուղները ճիւղերից կախուած (մեր Երեւանի թթերի նման):*

*Նա բարձրանում է ծառը եւ բուռ բուռ ճաշակում թթերը: Դարբինը հաւաքում է գործիքները, փակում է դարբնոցը եւ գլխիկոր կանգնում դրան առաջ պատրաստ:*

*Սատանան մի լաւ ուտում կշտանում է, ուզում է իջնել ծառից, չի կարողանում: Դարբինը տեսնում է սատանան կպել է ծառից, չի կարողանում իջնել: Յիշում է տարիներ առաջ Քրիստոսի էշի պայտելու պայմանը, սրտապնդւում է, մօտենում ծառին ամուր կպած սատանային ու տուր թէ կը տաս:*

*- Եկել ես հոգիս տանես, հա՛: Հիմա կը տեսնենք թէ ով ո՞ւմ հոգի կը հանի, - ասում է նա: Բացում է դարբնոցը, գտնում այն տոպրակը, որը միայն իր հրամանին է ենթարկւում եւ բերում հագցնում սատանայի գլխին, բերանը կապում, տանում ներս: Վրան ջուր է լցնում ու երկաթեայ գործիքներով մի լաւ ծեծ է տալիս: Յետոյ տոպրակը սատանան մէջը, գցում է արհեստանոցի մութ անկիւնում: Սատանայապետը, տեսնելով որ ուղարկուած սատանան ուշանում է, ուղարկում է երեք սատանայ եւ պահանջում շուտ բերել դարբինի հոգին: Այս երեքն էլ են արժանանում առաջին սատանայի բախտին: Ամէն օր, նախքան դարբնոցը փակելը, դարբինը ջուր է լցնում սատանաների վրայ եւ շատ ծեծ տալիս: Սատանայապետը մի որոշ ժամանակ անց 40 փորձուած սատանայ է ուղարկում նրա հետեւից: Սրանք էլ են տոպրակի մէջ ընկնում ու արժանանում ամէնօրեայ ծեծի: Մի խօսքով դարբինը դժոխքի բոլոր սատանաներին հաւաքում է, Քրիստոսի պայմանով իրեն մնացած տոպրակի մէջ:*

*Դրանից յետոյ քաղաքի դատաւորը զանգ է տալիս դատախազին, թէ այն ինչ հաշիւ է, յանցագործութիւնները վերացել են, մեր գործը թուլացել: Առաջուայ գողութիւնները, բռնաբարութիւնները, աւտովթարները չկան: Դատախազը իր հերթին զանգահարում է իր ենթականերին, իմանալու պատճառը: Սրանք հաղորդում են, որ մեղաւորը մի դարբին է: Բոլոր սատանաներին հաւաքել եւ լցրել է իր արհեստանոցի անկիւնը ու բանտարկել:*

*Դատախազը փորձառու աւանտիւրիստ է լինում, իսկոյն հասկանում է բանն ինչումն է: Զանգում է դատաւորին: Երկուսով ծպտուած գալիս են «դէպքի վայրը, իրենց աչքերով տեսնում եւ իրենց ականջներով լսում են սատանաների լացն ու վայնասունը, երբ դարբինը թաց տոպրակի մէջ սովորականի նման երկաթեայ ձողերով ջարդում է նրանց կողերը: Երկուսով յանկարծակի մտնում են դարբնոց եւ ասում.*

*- Այս ի՞նչ ես անում, այ վարպետ: Բռնութեան ակտ ես կատարում: Բա չգիտես որ մեր երկիրը ժողովրդավար երկիր է, արդարադատութիւն կայ, դատարան կայ, դիմիր այնտեղ, ինքնագլուխ գործեր ես անում եւ դրա համար պատասխան կը տաս:*

*- Սա իմ անկախ, սեփականաշնորհուած դարբնոցն է, սրանք սատանաներ են եւ եկել են իմ հոգին առնելու: Ես էլ օգտուելով սահմանադրութեամբ իմ հինգ պաշտպանելու իրաւունքից, սրանց նախնական կալանքի եմ ենթարկել ու մինչեւ դատավարութեանը սկսելը նրանցից բացատրութիւններ եմ վերցնում: Նրանք չարչարանքների ձայնագրութիւնները կատարւում են բարձր որակի ձայնագրիչներով եւ նրանք ամէն օր խոստովանում են իրենց մեղքերը, ինչպէս նաեւ ինձ մօտ գալու նպատակները:*

*Դատաւորն ու դատախազը տեսնում են, որ նրան փռացնել չի լինի, օրէնքներից լաւ գլուխ է հանում, խօսքի ձեւը փոխում են:*

*- Պարոն Նալբանդ, սատանաները մեղք են, բայց թողէք: Նրանք էլ գործ ունեն:*

*- Ոչ մի դէպքում, ես սրանց հերը պիտի անիծեմ, - ասում Նալբանդը: Ստիպուած դատաւորը եւ դատախազը իրենց կաշառք վերցրած ոսկիները բերում, տալիս են դարբնին: Մի գրաւոր միջնորդագիր էլ կցում «Գործին» որ երաշխաւորում են սատանաների չերեւալը դարբնոցի շրջակայքում: Դարբինը հաւատում է նրանց տուած խօսքին, տոպրակի բերանը բացում է: Սատանաները մի ակնթարթում անյայտանում են: Խեղճերը վախներից այնքան հեռու են փախչում, որ ոչ միայն դարբնի արհեստանոցի շուրջը չեն յայտնւում, այլ այդ երկրից ընդհանրապէս են հեռանում:*

*Դատաւորի եւ դատախազի յոյսերը թէ յանցագործութիւնները նորից կը վերսկսուեն, չի կատարւում: Խեղճ կաշառակերները իրենց կեանքի վերջին օրերը անցկացնում են աղքատութեան, թշուառութեան եւ հոմլեսութեան մէջ:*

*Իսկ տարիները անցնում են ու անցնում:*

*Դարբինը դարձել էր ալեհեր ծերունի: Հարիւր տարին վաղուց էր լրացել: Բոլորը կարծում էին, թէ նա անմահ է, բայց մի օր էլ Գաբրիէլ հրեշտակը իջաւ նրա դարբնոցի առջեւ:*

*- Աստծու կամքով ես եկել եմ քեզ երկինք տանելու, - յայտնում է նա:*

*- Սիրով, - պատասխանում է դարբինը, - միայն թոյլ տուր հրաժեշտ տամ զաւակներիս, թոռներիս, ծոռներիս:*

*Գաբրիէլ հրեշտակը համաձայնւում է: Դրանից յետոյ նրանք երկուսով բարձրան ում են երկինք:*

*Դարբինը հենց որ հասնում է երկինք, նայում է չորս կողմը: Տեսնում է հեււում ինչ որ ծառեր են երեւում, շատրուաններ եւ այլ գեղեցիկ տեսարաններ: Շարժւում է այն կողմ, մտածելով, որ դրախտը սա է որ կայ: Ձեռնափայտը ձեռքին ծանր ծանր մօտենում է դրախտի դռներին: Զանգը տալիս է որ բացեն: Դրան դիտանցքից Պետրոս առաքեալը, որի մօտ է դրախտի բանալիները, տեսնում է Քրիստոսի էշը պայտող դարբինն է:*

*- Գնա, այստեղ դու տեղ չունես, - գոչում է Պետրոսը ներսից, - յիշում ես մեր Տէր Քրիստոսի էշին պայտելու ժամանակ քո առաջ քաշած սատանայական պահանջը: Հեռացիր, գնա:*

*Քրիստոս լսելով Պետրոսի կոպիտ խօսակցութիւնը, հարցնում է.*

*- Ո՞վ է: Ի՞նչ է ուզում:*

*- Տէր իմ, այն մարդն է, որ Երուսաղէմից Նազարէթէ գնալիս մեր աւանակին չէր ուզում անվճար պայտել եւ վերջում էլ սատանայական գործեր պահանջեց մեզանից:*

*- Քշիր թող գնա, ներս չառնես, - հրամայում է Քրիստոսը, - նրա տեղը սատանաների մօտ է, դժոխքում:*

*Դարբինը շատ արցունք թափեց, խնդրեց, բայց նրան դրախտ չթողեցին դուռը չբացուեց: Ստիպուած դրսում չմնալու համար, յուսահատուած շարժուեց դժոխքի կողմը:*

*Հասաւ դժոխքի դրանը եւ կամաց, վախուորած ծեծեց այն: Թարսի նման այդ օրը դրան պահակն էր այն սատանան, որ առաջինն էր եկել հոգին առնելու, հետեւաբար ամենաշատ ծեծը ինքն էր կերել: Սա որ դրան դիտակից դարբնին տեսնում է, դալմաղալ է բարձրացնում, սա թէ հասէք դուռը պահէք, մեզ ծեծողը եկել է մեր ետեւից: Սատանաները թափւում են եւ քար ու փայտ, ծառ ու ճիւղ են լցնում դրան ետեւը, որ յանկարծ դարբինը դժոխք չմտնի:*

*Խեղճ մարդը խնդրում է, աղաչում.*

*- Ինչ եղել եղել է, եկէք բարիշենք, ինձ ներս թողէք, ինչքան կ՛ուզէք տանջէք: Լսող չկայ: Սատանաները մի ձայնի վրայ ներսից գոռում են:*

*- Զգաս, կորի գնա:*

*Դարբինը տեսնելով որ ճար չկայ, ոչ դրախտում տեղ ունի, ոչ դժոխքում, ձեռնափայտով չափում է դրախտի եւ դժոխքի միջեւ եղած հեռաւորութիւնը եւ ճիշտ մէջտեղում անցնում է գործի:*

*Մի շինութիւն է սարքում եւ դրան վրայ գրում.*

*Ովքեր տեղ չունեն ոչ դժոխքում եւ ոչ դրախտում, բարի եկան ինձ մօտ:*

*Հիմա իմ եզրակացութիւնը այն է: Ես երբ գնալու լինեմ այս փուչ աշխարհից, հաւատայ ինձ, որ գնալու եմ վարպետ դարբնի (ՆԱԼԲԱՆԴի) մօտ: Հիմա չգիտեմ, համաձայն կը լինես իրար հանդիպենք այնտեղ, դարբինի մօտ: Կարծում եմ մեր ճակատագրերը իրար նման են մի քիչ աւել, մի քիչ պակաս: Զմոռանամ ասելու որ ցանկացողներ շատ կան, բայց ես քեզ եմ նախընտրում լինել իմ յաւերժական ընկերը:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆի մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ամուսինին, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար դուստրին Տէր եւ Տիկ. Թովմաս եւ Ալին Էթարեանին:*

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ
Proud Past

Լուսաշող Ապագայ
Exciting Future

AGBU SOUTHERN CALIFORNIA
DISTRICT COMMITTEE

Proudly Presents the 4th Annual

# AGBU SOCIETY DINNER

Saturday, October 13, 2007 – 7PM
HUNTINGTON RITZ CARLTON HOTEL

DONATION $1,000 PER COUPLE
626.794.7942

## *Let us teach Armenian to your children!*

***Our children must read and write what they speak.***

**AGBU**
**ARMENIAN SATURDAY SCHOOL OF ORANGE COUNTY**
at Saint Mary Armenian Church
148 E. 22ND STREET, COSTA MESA

**Registration begins**
**Saturday, September 8, 2007 – 10am**

- Eastern & Western Armenian dialects will be taught in separate classes
- Small Class Size
- Qualified Teachers
- Introduction to Armenian History & Traditions
- Snacks
- Loving Atmosphere

For more information, please call
Krikor at 714-898-9053

****New Teachers Wanted****

Հ.Բ.Ը.Մ. ԱՐՏԱՒԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

# ՎԵՆԵՏԻԿՑԻ ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 8 - ՀՈԿՏԵՄԲԵՐ 7, 2007 • Հ.Բ.Ը.Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԱՐՏԱՒԱԶԴ ԹԱՏԵՐԱՍՐԱՀ

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION / ORANGE COUNTY CHAPTER

## *ARMENIAN SATURDAY SCHOOL ANNUAL PICNIC*

SUNDAY, SEPTEMBER 9, 2007 11:00AM – 7:00PM • WILLIAM MASON REGIONAL PARK
18712 University Drive, Irvine / Picnic Shelter #3
Donation: Adults $15 / Children 12 and under $8 / Under 2 years Free
*Includes: Shish Kebob, Pita Bread, Pilaf, Hommus, Salad, Fresh Fruit, Dessert and Soft Drink.*
For more information and reservations: Krikor (714) 898-9053 • Alenoush (949) 857-9053 • Jean (949) 786-0746

**KHACHIK ABRAHAMYAN ASHOT AVAGYAN GAREGIN DAVTYAN MARINE DILANYAN HERMINE DEMIRTSHYAN GAGIK GHAZANCHYAN ALBERT HAKOBYAN MAYIS MKHITARYAN LILIT SOGHOMONYAN**



## ՅՈՒՇԵՐ

# ՄԻԹԻՆԳ ԵՐԵՒԱՆՈՒՄ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒ. ՔՀՆՅ. Տ. ՄՆՍՐՈՊԵԱՆ

Երեւանի Ս. Պօղոս–Պետրոս եկեղեցին համարւում էր մայրաքաղաքի ամենագեղեցիկ եկեղեցիներից մէկը, որի հսկայական զանգերի ձայնը թնդացնում էր Երեւանը եւ արձագանգը գնում հասնում էր մինչեւ Նորք Քանաքեռ եւ աւելի հեռուներ: Առաւօտ, երեկոյ, ամենայն կանոնաւորութեամբ հնչում էին եկեղեցու զանգակները եւ հաւատացեալներին աղօթքի հրաւիրում:

1928 թիւն էր: Աբովեան պողոտայի վրայ գտնուող Նորակառոյց կարմրագոյն հիւրանոցի առջեւ միթինգ էր կազմակերպուած, որտեղ ներկայ էին պետական դէմքեր, ինչպէս նաեւ հիւրեր՝ միւս հանրապետութիւններից: Դժբախտաբար չեմ յիշում թէ ինչի՞ առթիւ էր կազմակերպուած այդ լայնածաւալ միթինգը, որին ներկայ էին մի քանի հազար հոգի:

Կիրակնամուտ էր: Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Ղեւոնդ Քհնյ. Ադամեանի հետ կանգնել էինք եկեղեցու բակում: (Ես տիրացուի պաշտօն ունէի):

Դրսում աղմուկ, իրարանցում կար: Անվերջ բացականչութիւն եւ ծափահարութիւններ: Երեկոյեան ստվորական ժամին, եկեղեցու ժամկոչ Սամուէլը հնչեցրեց զանգերը՝ բարձր ու քաղցրալուր:

Յանկարծ եկեղեցու մեծ դարպասից վազելով հեւասպառ ներս մտան երկու երիտասարդներ եւ գրեթէ պոռալով ազդարարեցին մեզ:

- Միթէ չէ՞ք տեսնում որ դրսում միթինգ կայ, ինչու էք զանգերի ձայնով խանգարում մեր միթինգը, իսկոյն դադարեցրէք զանգերի ձայնը...

Տէր Ղեւոնդ քահանան ու ես մի պահ շշմած իրար նայեցինք: Ի՞նչ կարելի էր անել, միթէ կարելի էր հակառակել եղած հրահանգին: Ստիպուած զանգահարութիւնը դադարեցրինք եւ երիտասարդ տղաները բաւարարուած զգալով իրենց, հեռացան:

Երիտասարդների հեռանալուց հազիւ մէկ-երկու րոպէ էր անցել, մենք դեռ լրիւ չէինք սթափուել, երբ միեւնոյն դարպասից ներս մտաւ թխադէմ, լեցուն կազմուածքով եւ առոյգ մի երիտասարդ իր թիկնապահներով, որը հաստատուն քայլերով, մօտեցաւ մեզ, բարեւեց եւ կէս զայրացած տոնով հարցրեց.

- Ինչո՞ւ դադարեցին եկեղեցու զանգերը...

Տէր հայրը բացատրեց, որ երկու երիտասարդներ ներս մտան եւ կարգադրեցին զանգերը դադարցնել, առարկելով, որ խանգարում են միթինգին:

Նորէկի դէմքը մթագնեց, աչքերը աւելի զայրացկոտ փայլ ստացան, ապա հազիւ իր զայրոյթը ծածկելով ասաց.

- Ոչ ոք իրաւունք չունի արգելելու զանգերի ղօղանջումը, ոչ ոք իրաւասու չէ միջամտելու եկեղեցական գործերին, դուք ձեր գործին կացէք, ես կարգադրում եմ որ հենց հիմա զանգերը զարկէք...

Այս ասելով, նա թեքուեց ու դուրս գնաց եկեղեցու բակից: Քահանան ու ես, շշմած նայում էինք նրա ետեւից:

Հայաստանի թիւ մէկ մարդը՝ Աղասի Խանջեանն էր նա:

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ» ՀԱՏՈՐԻՑ

# ԱՌԻՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

ԳՈՒՍԱՆ ԱՊԵՐ
(ԻՍԿԱՆԴԱՐ ԻՍԿԱՆԴԱՐԵԱՆ)

Մի աշնան առաւօտ առիւծ արքան քաղցած փորով ու բեզարած բնից դուրս է գալիս փորը կշտացնելու նպատակով: Նա շատ սար ու ձոր է պտտւում, չի յաջողւում որսալու: Այդ օրուայ անյաջողութեան համար, արքան զայրացած ու հիասթափուած անհանգիստ վիճակում գլորւում է որ մի քիչ հանգստանայ եւ յետոյ փորի հարցը լուծի հենց այդ անիմաստ մտածումներով քունը տանում քնում է եւ ինչպէս ասում են քաղցածը երազում հաց է տեսնում եւ ծարաւը ջուր, մեր առիւծ արքան էլ այդ բախտին է արժանանում: Երազում տեսնում է, որ իրենից քիչ հեռու սարափէշին, մեծ խմբեր կազմած անասուններ են, արածելով անցնում դէպի ձոր, շատ է ուրախանում, բայց թեքուելով միւս կողմը տեսնում է մի ահռելի գոմէշ իրեն արհամարելով կողքից անցնում է առանց բարեւելու:

Առիւծ արքան շատ է զայրանում, վեր է թռչում, որ գոմէշին բռնի, քնից արթնանում է եւ տեսնում է, որ այդ բոլորը երազ էր: Զարմանալին այն էր, որ արհամարհող գոմէշի փոխարէն նա նկատում է մի նիհար մկնիկ, որ իր պոչի հետ խաղ է անում:

Քաղցած ու զայրացած առիւծը մռնչում է մկնիկի վրայ:

- Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես գոռում, - ասում է մկնիկը:

- Առիւծ արքան աւելի է բարկանում ու մկանը բռի մէջ առնում:

Սիրելի արքայ, ներողամիտ եղիր, - ասում է վախից կուչ եկած մկնիկը, - ձագուկներս քաղցած էին, ուտելիք էի ման գալիս, բան չգայ, մտածեցի մի քիչ հանգստանամ եւ յետոյ փնտռեմ: Ինձ ապահով զգալու համար, ձերդ գերազանցութեան մօտ եկայ, եւ քանի որ դուք քնած էիք, իսկ իմ քունը չէր տանում, մտածեցի ձեր պոչի հետ խաղալ:

Այ յիմար, անիրաւի մէկը, իմ պոչը քո խաղալի՞քն է, - գոռում էր արքան, - Հիմա ասա, ինչպէ՞ս վարուեմ քեզ հետ:

- Քո պոչիդ թելադրանքով շարժուիր, - պատասխանում է մկնիկը, - Դուք զոռ-բաշներդ, սիրում էք տկարների հոգու հետ խաղալ առանց մտածելու:

Մկնիկի այս խօսքերից բարկացած առիւծը բացականչում է, - Քո վերջը եկել է:

- Լսիր սիրելի արքայ, ուզում ես ինձ ուտել կեր, բայց իմացիր, որ ինձ ուտելով դու չես կշտանայ, ասաց նիհար մկնիկը, իրեն մէջ համարձակութիւն գտնելով, - զուր տեղը մեղք մի գործիր, թոյլ տուր գնամ եւ քաղցած ձագուկներիս համար կեր գտնեմ: Իմացիր, որ քո լաւութիւնը մի օր կը փոխարինեմ:

- Այ, յիմար մուկ, դու ո՞վ ես, որ իմ լաւութիւնը փոխարինես, - մուկի խօսքերից սարսափահար պատասխանում է արքայ առիւծը:

-Կորի գնա, էլ աչքիս չերեւաս:

- Դեռ կը հանդիպենք արքայ առիւծ, - ասում է մկնիկը ու հեռանում:

Այսպիսով բաժանւում են առիւծն ու մկնիկը եւ շարունակում իրենց ճանապարհը:

Ամիսներ են անցնում, երբ մի

Շար.ը էջ 19




New 2006 KIA OPTIMA LX
More Power, V6
Buy For $179 Per Month
1 AT THIS PAYMENT
+99¢ per month. 84 payments at 5.99% APR financing on approved above-average credit. $4995 customer down payment + $2000 factory rebate equals $6995 total down payment. Sale price $17,596.04
New 2006 KIA SORENTO EX 2WD
$7,995
YOUR PICK
1 AT THIS NET SAVINGS
$7,995 net savings off MSRP includes a $4000 Factory Rebate, $2995 GK discount and $1000 Competitive Bonus.
New 2007 KIA RIO
Sale Price $8495
Factory Rebate -$500
1 AT THIS NET COST
The Kia Red-Tag Lease-A-Thon
With Low Down Payment
NEW 2007 KIA SPORTAGE LX
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Lease For Only $129 Per Month
1 AT THIS PAYMENT
NEW 2007 KIA SPECTRA EX
Auto, PW, PL
Lease For Only $134 Per Month
1 AT THIS PAYMENT
NEW 2007 KIA OPTIMA LX
Auto, PW, PL
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Lease For Only $139 Per Month
1 AT THIS PAYMENT
NEW 2007 KIA RONDO
GREAT MPG & GREAT MP3 PLAYER
Use the 3rd row to seat up to 7 people!
Lease For Only $159 Per Month
1 AT THIS PAYMENT
NEW 2007 KIA SORENTO LX
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Lease For Only $174 Per Month
1 AT THIS PAYMENT
NEW 2007 KIA SEDONA
Auto, PW, PL
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Lease For Only $209 Per Month
1 AT THIS PAYMENT
VIEW PICTURES
Check Out These Vehicles & More @:
www.glendalekia.com
Pre-Owned Vehicle
'04 Kia Spectra LS SDN $9870 $6495 $75/Mo (K70326B/303948)
'03 Mitsubishi Diamante LS SDN $14,685 $10,995 $163/Mo Auto, Air, PPkg, & More. (K61826A/011735)
'02 Toyota Camry SDN $14,130 $11,995 $182/Mo Air, Auto, PPkg, & More. (P60715/040786)
'03 Nissan Frontier Supercharged King Cab $15,210 $13,495 $208/Mo Air, Auto, PPkg, Loaded. (P61024/427397)
'04 Mazda RX-8 Coupe $18,165 $14,495 $230/Mo Air, 6-Speed, Loaded. (P70518/109875)
'06 Mazda3 S $20,255 $16,495 $266/Mo Air, PPkg, ABS, & More. Previous Rental. (P60644/499232)
'03 Toyota Highlander SUV $19,675 $16,495 $269/Mo Air, Auto, PPkg, More. (P60567/115665)
'06 Suzuki XL-7 SUV $20,805 $16,495 $269/Mo Air, Auto, PPkg, Loaded. Previous Rental. (P70373/105206)
'06 Scion tC Coupe $19,330 $16,995 $279/Mo Air, Auto, PPkg, More. (P61198/070951)
'06 Honda Element LX SUV $21,360 $17,495 $285/Mo Air, Auto, PPkg, More. (K70546DA/005382)
'05 Jeep Wrangler SUV $21,190 $18,495 $304/Mo Auto, Air, CD, More. (P70288/315604)
'03 Infiniti I35 SDN $19,465 $18,495 $308/Mo Auto, Air, PPkg, Loaded. (P60112/103945)
'04 Lincoln LS V8 SDN $23,475 $19,995 $333/Mo Auto, Air, PPkg, Lthr & More. Previous Rental. (P50106/646521)
'04 Ford Expedition $24,735 $20,995 $356/Mo Air, Auto, PPKG, More. (P70459/B14590)
'02 Mercedes-Benz C320 WGN $22,050 $21,495 $367/Mo Air, Auto, PPkg & More. (P50745/151085)
'03 Toyota Sequoia SR5 $24,205 $22,495 $385/Mo Air, Auto, PPkg, & More. (P50488/139604)
'02 Lexus RX300 SUV $25,435 $22,995 $396/Mo Air, Auto, PPkg, & More. (P60211/288749)
'05 Acura TSX SDN $25,565 $23,995 $411/Mo Air, Auto, PPkg, Navigation, More. (P70428/008817)
'04 Infiniti G35 CP $28,125 $24,495 $420/Mo Auto, Air, Loaded. (P70354/803738)
'05 Chrysler Crossfire Limited $26,300 $24,495 $424/Mo Air, PPKG, Loaded. (P70635/057759)
'05 Infiniti G35 CP $29,310 $26,495 $460/Mo Air, Auto, PPkg, Loaded. (P70643/403074)
'06 Audi A4 2.0T SDN $30,605 $27,495 $482/Mo Auto, Air, PPkg, & More. (P70419/189354)
'05 Ford Thunderbird 50th Anniversary $35,910 $28,495 $502/Mo Auto, Air, PPkg, Loaded. (P70310/106369)
'04 Infiniti FX45 SUV $35,310 $28,995 $507/Mo Auto, Air, Pwr Pkg, Loaded. (P70540/400383)
'04 BMW 525i SDN $35,640 $32,995 $589/Mo Auto, Air, PPkg, More. (P70345/174099)
'04 BMW 745Li SDN $55,850 $45,995 $841/Mo Loaded, Navigation, Low Miles. (P70356/D54963)
GLENDALE KIA
The Power to Surprise
#1 VOLUME KIA DEALER IN CA!
College Grads Ask about our $400 Bonus Rebate!
2242 San Fernando Road, LA 90065
TOLL FREE: 866-211-8000
SE HABLA ESPAÑOL
10 YEAR 100,000 MILE WARRANTY
All advertised prices exclude government fees and taxes, any finance charges, any dealer document preparation charge and any emission testing charge. All vehicles are on approval of credit. Rebates are not to be used with any special APR programs. Kelley Blue Book prices are based on July/August '07 Kelley Blue Book. Offer ends the close of business date of publication.

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

*Հայաստանի ֆուտբոլի առաջնութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները*

***Գանձասար - Շիրակ** 4-2*
***Արարատ - Փիւնիկ** 0-6*
***Ուլիս - Կիլիկիա** 1-0*

*Խումբերու դասաւորումը*

| | Խաղ | Յաղթ. | Հաւս. | Պարտ. | Կոլ | Միաւոր |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Արարատ | 18 | 12 | 2 | 4 | 32-17 | 38 |
| 2. Փիւնիկ | 16 | 12 | 1 | 3 | 40-12 | 37 |
| 3. Միկա | 16 | 8 | 4 | 4 | 28-16 | 28 |
| 4. Բանանց | 17 | 8 | 4 | 5 | 27-20 | 28 |
| 5. Գանձասար | 18 | 8 | 4 | 3 | 19-14 | 28 |
| 6. Շիրակ | 17 | 5 | 5 | 7 | 17-20 | 20 |
| 7. Ուլիս | 18 | 3 | 2 | 13 | 9-37 | 11 |
| 8. Կիլիկիա | 18 | 1 | 2 | 15 | 5-41 | 5 |

### ԵԱՆ ՊՈՐՏԵՐՖԻԼԴ. »ԽԱՂԻՑ ԱՌԱՋ ՅԱՋՈՂ ԱՐԴԻՒՆՔ ԱԿՆԿԱԼՈՒՄ ԷԻ«



*«Ձեմ ցանկանում ինքնավստահ թուալ, սակայն Պորտուգալիայի հետ խաղից առաջ յաջող արդիւնք ակնկալում էի»,- խաղից յետոյ հրաւիրած մամլոյ ասուլիսի ժամանակ յայտարարեց ֆուտբոլի Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Եան Պորտերֆիլդը: Նրա խօսքերով, ֆուտբոլիստները խաղադաշտ էին մտել յաղթողի հոգեբանութեամբ եւ հոգեպէս պատրաստ էին խաղին:*

*Եան Պորտերֆիլդը գոհ է խաղից եւ արդիւնքից: «Թէեւ Հայաստանը ուժեղ հաւաքականի հետ էր խաղում, այդուհանդերձ, կարողացաւ ցոյց տալ գեղեցիկ եւ գրագէտ ֆուտբոլ»,- նշեց շոտլանդացի մասնագէտը:*

*Եան Պորտերֆիլդի կարծիքով, Հայաստանի հաւաքականը շարունակելու է յաջող ելոյթները միջազգային ասպարէզում: Այսօր հաւաքականում մի քանի երիտասարդ ֆուտբոլիստներ են ընդգրկուած, ում, մարզչի խօսքերով, մեծ ապագայ է սպասում:*

*Պորտուգալիայի հաւաքականի գլխաւոր մարզիչ Ֆելիպէ Սկոլարին զարմացած էր Հայաստանի հաւաքականի ֆիզիկական եւ տեխնիկական պատրաստուածութեամբ, թէեւ խաղից առաջ մանրամասն ուսումնասիրել էր մրցակցի խաղը: Կարծում է, որ 1:1 հաշիւը արտացոլում է խաղադաշտում ծաւալուած պայքարը: «Երկու հաւաքականներն էլ յամառ պայքար էին մղում եւ արժանի էին միաւոր վաստակել: Ոչ-ոքի արդիւնքը, կարծում եմ, արդարացի է եւ տրամաբանական»,- նշեց Ֆելիպէ Սկոլարին:*

### ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ
### ՅՈՒՆԱՀՌՈՄԷԱԿԱՆ -
### ԱՐՍԷՆ ՋՈՒԼՖԱԼԱԿԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ
### ԱՐԹՈՒՐ ՇԱՀԻՆԵԱՆ ԱՐԾԱԹԷ ՄԵՏԱԼ

*Փեքինում աւարտուած աշխարհի յունահռոմէական ըմբշամարտի երիտասարդական առաջնութիւնում Հայաստանը ներկայացուած է 6 մարզիկներով: Նրանցից Արսէն Ջուլֆալակեանը (Գիւմրի) հանդէս գալով 74 կգ քաշային կարգում միայն յաղթանակներ տօնեց եւ նուաճեց աշխարհի ախոյեանի կոչումը:*

*Հայաստանի պատուիրակներից արծաթէ մետալակիր դարձաւ Արթիւր Շահինեանը (84 կգ, Էջմիածին):*

### ԱԶԱՏ ՈՃ -
### ՕՀԱՆ ԳԻՔԻՆԵԱՆ ԱՐԾԱԹԷ ՄԵՏԱԼ

*Օգոստոսի 26-ին Փեքինում աւարտուեց աշխարհի ազատ ոճի ըմբշամարտի երիտասարդական առաջնութիւնը: Մրցումներին Հայաստանը ներկայացնում էին 4 մարզիկներ: 2-րդ տեղը գրաւեց եւ արծաթէ մետալի արժանացաւ Օհան Գիքինեանը (50 կգ, Վանաձոր): Հայաստանի միւս մարզիկները անմասն մնացին խաղարկուած պարգեւներից:*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506**

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ**
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից


## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

### *ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 4-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Սանտըրլէնտ - Լիվըրփուլ | 0-2 | Ասթոն Վիլլա - Ֆուլհամ | 2-1 |
| Պոլթըն - Ռիտինկ | 3-0 | Արսենալ - Մանչեսթըր Ս. | 1-0 |
| Ուէսթ Համ - Ուիկան Աթլ. | 1-1 | Էվըրթըն - Պլէքպըրն | 1-1 |
| Տերպի Քաունթի - Պըրմինկհէմ | 1-2 | Միտըլզպորօ - Նիւքէսըլ | 2-2 |
| Չելսի - Փորթսմութ | 1-0 | Մանչեսթըր Եուն. - Թոթենհամ | 1-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Չելսի | 4 | 3 | 1 | 0 | 7-4 | 10 |
| Մանչեսթըր Սիթի | 4 | 3 | 0 | 1 | 4-1 | 9 |
| Ուիկան Աթլ. | 4 | 2 | 1 | 1 | 6-3 | 7 |
| Լիվըրփուլ | 3 | 2 | 1 | 0 | 5-2 | 7 |
| Էվըրթըն | 4 | 2 | 1 | 1 | 6-4 | 7 |
| Արսենալ | 3 | 2 | 1 | 0 | 4-2 | 7 |
| Նիւքէսըլ | 3 | 1 | 2 | 0 | 5-3 | 5 |

### *ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան 3-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| ՎՖԼ Պոխում - Համպուրկ | 2-1 | Պ. Լիվըրքուզըն - Քարլսրուհէ | 3-0 |
| Նիւրեմպըրկ - Վարտըր Պրէմըն | 0-1 | Տորթմունտ - Քոթպիւս | 3-0 |
| Արմ. Պիլըֆէլտ - Հերթա Պերլին | 2-0 | Վոլսպուրկ - Շալքէ-04 | 1-1 |
| Շթութկարթ - Տուիզպուրկ | 1-0 | Այնթ. Ֆրանքֆորթ - Ռոսթոք | 1-0 |
| Պ. Միւնիխ - Հանովըր-96 | 3-0 | | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պայերն Միւնիխ | 3 | 3 | 0 | 0 | 10-0 | 9 |
| Արմ. Պիլըֆէլտ | 3 | 2 | 1 | 0 | 7-3 | 7 |
| ՎՖԼ Պոխում | 3 | 2 | 1 | 0 | 6-4 | 7 |
| Այնթ. Ֆրանքֆորթ | 3 | 2 | 1 | 0 | 4-2 | 7 |
| Համպուրկ | 3 | 2 | 0 | 1 | 3-2 | 6 |
| Շալքէ-04 | 3 | 1 | 2 | 0 | 7-4 | 5 |
| Պ. Լիվըրքուզըն | 3 | 1 | 1 | 1 | 3-1 | 4 |

### *ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան առաջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Լացիօ - Թորինօ | 2-2 | Փարմա - Քաթանիա | 2-2 |
| Եուվենթուս - Լիվորնօ | 5-1 | Նափոլի - Քալիարի | 0-2 |
| Սիենա - Սամտորիա | 1-2 | Ինթէր Միլան - Ուտինեզէ | 1-1 |
| Ճենովա - Ա. Մէ. Միլան | 0-3 | Ֆիորենթինա - Էմփոլի | 3-1 |
| Ռեճինա - Աթալանթա | 1-1 | Փալերմօ - Ա. Էս. Ռոմա | 0-2 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եուվենթուս | 1 | 1 | 0 | 0 | 5-1 | 3 |
| Ա. Մէ. Միլան | 1 | 1 | 0 | 0 | 3-0 | 3 |
| Ֆիորենթինա | 1 | 1 | 0 | 0 | 3-1 | 3 |
| Ա. Էս. Ռոմա | 1 | 1 | 0 | 0 | 2-0 | 3 |
| Քալիարի | 1 | 1 | 0 | 0 | 2-0 | 3 |
| Սամտորիա | 1 | 1 | 0 | 0 | 2-1 | 3 |
| Փարմա | 1 | 0 | 1 | 0 | 2-2 | 1 |

### *ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան առաջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Ռէալ Մատրիտ - Աթլեթ. Մատրիտ | 2-1 | Ռասինկ - Պարսելոնա | 0-0 |
| Սեւիլլա - Կեթաֆէ | 4-1 | Վալենսիա - Վիլզարէալ | 0-3 |
| Աթլեթ. Պիլպաօ - Օսասունա | 0-0 | Հուէլվա - Ռէալ Պաթիս | 1-1 |
| Տեփ. Քորունա - Ալմերիա | 0-3 | Մուրսիա - Սարակոսա | 2-1 |
| Մայորքա - Լեվանթէ | 3-0 | Էսփանիոլ - Ռէալ Վայատոլիտ | 0-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սեւիլլա | 1 | 1 | 0 | 0 | 4-1 | 3 |
| Ալմերիա | 1 | 1 | 0 | 0 | 3-0 | 3 |
| Մայորքա | 1 | 1 | 0 | 0 | 3-0 | 3 |
| Վիլզարէալ | 1 | 1 | 0 | 0 | 3-0 | 3 |
| Մուրսիա | 1 | 1 | 0 | 0 | 2-1 | 3 |
| Ռէալ Մատրիտ | 1 | 1 | 0 | 0 | 2-1 | 3 |
| Ռէալ Վայատոլիտ | 1 | 1 | 0 | 0 | 1-0 | 3 |

### *ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 2-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Քան - Մարսէյլ | 1-2 | Ռընէ - Մէթց | 2-0 |
| Վալանսիէ - Սոշօ | 3-1 | Պորտօ - Լօրիան | 2-2 |
| Նիս - Թուլուզ | 1-1 | Մոնաքօ - Լը Մանս | 3-1 |
| Նանսի - Օքսէռ | 4-1 | Լիոն - Սէնթ Էթիէն | 1-1 |
| Սթրասպուրկ - Լանս | 2-1 | Փարիզ Սէն Ժերմէն | 1-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Նանսի | 5 | 4 | 1 | 0 | 11-4 | 13 |
| Վալանսիէ | 6 | 4 | 1 | 1 | 12-7 | 13 |
| Լօրիան | 6 | 3 | 2 | 1 | 10-8 | 11 |
| Մոնաքօ | 5 | 3 | 1 | 1 | 10-4 | 10 |
| Սթրասպուրկ | 5 | 3 | 1 | 1 | 8-3 | 10 |
| Լը Մանս | 5 | 3 | 1 | 1 | 8-6 | 10 |
| Պորտօ | 5 | 2 | 2 | 1 | 6-4 | 8 |

# ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ «ՄԱՍԻՍ»ԻՆ

*Ստորեւ կու տանք «Մասիս» Շաբաթաթերթի 27-րդ տարեդարձին առթիւ ցարդ եղած նուիրատուութիւններու ցանկը*

| | |
|---|---|
| «Մասիս» շաբաթաթերթի բարեկամ մը | $5,000 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Վարդուհի Զոլաքեան | $1,000 |
| Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյէմեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Ժէնիա Քէշիշեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան | $500 |
| Տօքթ. Սարգիս եւ Փրոֆ. Սիլվա Գարայեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Անի Պապիկեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Հայկանուշ Գալթագճեան | $500 |
| Տօքթ. Աւետիս եւ Տօքթ. Արա Դաւիթեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սեւան Գալէնտէրեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Կիւրեղ եւ Շողիկ Մանկրեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Շանթ եւ Լինա Ճիվալակեան | $400 |
| Արժ. Տ. Գառնիկ Հալաճեան | $300 |
| Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան | $300 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մէրի Փափազեան | $300 |
| Տէր եւ Տիկ. Միսաք եւ Անի Շիթիլեան | $300 |
| Տօքթ. եւ Տիկ. Համբիկ Նայրա Սարաֆեան | $300 |
| Մի ոմն | $300 |
| Տէր եւ Տիկ. Հէրի եւ Շուշան Վարդանեան | $250 |
| Տէր եւ Տիկ. Թորգոմ եւ Ռուդ Փոսթաճեան | $250 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արշօ Շէնեան | $250 |
| Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեան | $250 |
| Տէր եւ Տիկ. Ժան եւ Սիլվա Խոտանեան | $250 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ատրինէ Աճէմեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գոճապապեան | $200 |
| Զարըքեան եղբայրներ | $200 |
| Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաչինեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արփինէ Մարգարեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժել Գազէզեան | $200 |
| Փրոֆ. Օշին Քէշիշեան | $200 |
| Տօքթ. եւ Տիկ. Վահան եւ Մելինէ Ալատատի | $200 |
| Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան | $200 |
| Անուշավաճառ Վրէժ | $200 |
| Անուշավաճառ Սարգիս | $200 |
| Տէր եւ Տիկ. Վահէ եւ Ֆլորա Տիրացուեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեան | $200 |
| Յովսէփ Թոքաթ - Modal Marble & Granit | $200 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Լուսինէ Լիպարիտեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Կարպիս Պալըքճեան | $200 |
| Տէր եւ Տիկ.Գաբրիէլ եւ Սօնա Ալպարեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Ժանեթ Սիմիտեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Վարդգէս եւ Ռիդա Պալեան | $200 |
| Տօքթ եւ Տիկ. Միսաք Էքմէգճեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Մինաս եւ Սօնա Մալճեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեան | $200 |
| Տօքթ. եւ Տիկ. Ռուբէն եւ Շողիկ Եաղսզեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Գէւորգ եւ Սէսիլ Գէշիշեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տէփոյեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Քաթիա Եաղսզեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Լենա Մանուկեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Մարի Տէվէտճեան | $100 |
| Փրոֆ. Գէորգ եւ Տիկ. Անահիտ Խրլոպեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քնար Պողարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սուրէն Խուտանեան | $100 |
| «Քաջ Նազար» ամսաթերթ | $100 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Փիթըր եւ Անահիտ Տարաքճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Հրանդ եւ Զապել Սաֆարեան | $100 |
| Kradjian Importing Co. | $100 |
| Տէր եւ Տիկ. Հէնրի Սերոբեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սահակ եւ Լիւսի Թութճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Նեկտար Տէրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Ֆլորա Տունայեանց | $100 |
| Տիար Ռաֆֆի Գարայեան | $100 |
| Տիար Տիգրան Ժամկոչեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ջոհրապ եւ Արփի Զոլաքեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վահան եւ Անահիտ Թովմասեան | $100 |
| Տօքթ. եւ Տիկ. Յարութ եւ Մայտա Եաղսզեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Շուշիկ Մկրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Աւօ եւ Աստղիկ Ճէրէճեան | $100 |
| Տիար Պողոս Լագիսեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Հէնրիկ Անասեան | $50 |
| Տիար Մանուէլ Կէզալեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Հուրի Մութաֆեան | $50 |
| Տիար Գէորգ Խաչերեան | $50 |
| Զապէլ Զաւտարեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Կարօ եւ Էլիզապեդ Հայդաեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վարդան Պէքարեան | $50 |

# ԺԱՌԱՆԳՈՐԴԻ ՆԵԱՐԴԵՐԸ ՉԵՆ ԴԻՄԱՆՈՒՄ

*Շարունակուած էջ 5-էն*

«տիրոյթները»: Իսկ որո՞նք են այդ տիրոյթները: Դրանք առաջին հերթին հեռուստաընկերութիւններն են. Հանրային հեռուստաընկերութիւն (որն ուղղակիօրէն ղեկավարւում է նախագահի աշխատակազմից), «Հ2»-ը (Մայրապետեան Սամուէլը քաւոր-սանիկային յարաբերութիւնների մէջ է Արմենչիկի հետ), «Կենտրոն» հեռուստաընկերութիւն («Բարգաւաճ Հայաստանի» եւ Սերժ Սարգսեանի միջեւ ինչ ասես կարող է լինել, բացի փոխադարձ վստահութիւնից) եւ այլն:

Բայց Սերժ Սարգսեանն ուրիշ խնդիր էլ ունի՝ նա պարտաւոր է ունենալ իր անձնական օգտագործման օլիգարխը եւ վերջինիս հանել «պեռվի կուռգ»: Ամենայն հաւանականութեամբ, այդ դերը վերապահուել է Միխայիլ Բաղդասարովին, որն էլ, ըստ երեւոյթին, ձեռք կը բերի Քոչարեանին հաւատարիմ հեռուստաընկերութիւնները եւ դրանք կը վերապրոֆիլաւորի դէպի Սերժ Սարգսեանը: Միանգամայն հասկանալի է, որ այս «վերաբաշխումներում» տուժելու են նաեւ դաշնակները, որովհետեւ վերջիններս շարունակում են յամառօրէն «հաւատարիմ մնալ» Քոչարեանին եւ ոչ մի կերպ չեն ցանկանում Սերժի «տակ մտնել»: Պարզ ասած, Հանրային հեռուստաընկերութեան ղեկավարութիւնը փոխուելու է. դաշնակներն ու «ռոմանտիկները» այնտեղ չափազանց մեծ տոկոս են կազմում: Գոհար Քեալեանի ամուսինը նոյնպէս ստիպուած է լինելու հրաժեշտ տալ սեփական հեռուստաընկերութեանը:

Իսկ ո՞ւմ է վստահելու կարեւորագոյն այս ոլորտները Սերժ Սարգսեանը: Յանուն ճշմարտութեան պէտք է խոստովանել, որ ընտրութիւնը մեծ չէ: Ընդհանրապէս, Սերժը Հայաստանում քչերին կարող է վստահել: Իսկ այդ «քչերը» սրանք են. Սաշիկը, Վաչոն եւ «Շարմ» ընկերութիւնը՝ յարակից բագէներով: Ըստ էութեան, հենց այս «թիմով» էլ Սերժ Սարգսեանը պատրաստւում է դառնալ ՀՀ նախագահ:

Այլ հարց է, որ հասարակութիւնը դա թոյլ չի տայ: Ցանկացած օրգանիզմ ժամանակի ընթացքում իմունիտետ է ձեռք բերում զանազան վարակների նկատմամբ, այնպէս որ՝ առողջանալու շանսերը բաւականին մեծ են: Իսկ դա նշանակում է, որ Սերժ Սարգսեանը հազիւ թէ նախագահ դառնայ: Բոլոր հիմքերը կան յուսալու, որ նրա ապագան անհամեմատ աւելի մշուշոտ կը լինի:

# ԱՌԻՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

*Շարունակուած էջ 16-էն*

օր էլ ինչպէս միշտ առիւծը դուրս է գալիս որսի, յանկարծ նկատում է մի գեղեցիկ եղնիկ: Ագահաբար ցատկում է, որ բռնի, բայց ոչ միայն չի յաջողւում, այլ ինքն է զոյգ ոտքով թակարդն ընկնում եւ գետնին փռւում:

Նա գործադրում է իր առիւծական ամբողջ ուժը, բայց անօգուտ էր:

Մի պահ արքայ առիւծը խեղճանում է եւ գլուխը թաթերի մէջ առած քնում է ու երազում կրկին տեսնում ահռելի գոմէշին մկան կերպարանքով:

- Այդ ի՞նչ օրի ես ընկել սիրելի արքայ, - շոյելով ու գուրգուրելով առիւծին ասում է մուկը, արթնացիր, եկել եմ քեզ օգնելու:

Առիւծը քնից վեր է թռչում, աչքերը բաց է անում եւ տեսնում, որ իսկապէս իր առջեւ կանգնած է նիհար մկնիկը:

- Հիմա ի՞նչ ես ուզում ինձանից, - ասում է առիւծը:

- Քո արած լաւութիւնն է այստեղ բերել, եկել եմ քեզ ազատելու այս թակարդից, - պատասխանում է փոքրամարմին մկնիկը, - հիմա փակիր աչքերդ, մի քանի վայրկեանից կ՛ազատեմ քեզ:

Առիւծը կատարում է մուկի հրամանը եւ մուկը անցնում է գործի: Իր սուր ատամներով կտրատում է կաթարդը: Առիւծը աչքերը բացելով, իրեն տեսնում է ազատուած:

- Ճիշտ է, որ լաւութիւնը երբեք չի կորում, - ասում է առիւծը մկնիկին եւ շնորհակալութիւն յայտնելով հեռանում:

Այստեղ է ,որ ասում են, «Այն ինչ մուկը կարող է անել առիւծը չի կարող»:

Յոյսով եմ, որ այս պատմութիւնը օրինակ կը հանդիսանայ զուբաշ վերնախաւին, որոնք ամէն կերպ փորձում են իրենց վերադասել տկարներից եւ անգթաբար ձեռնարկում են միջոցներ, որպէսզի իրենց կատարած սրբապղծումներն ու ալան թալանը ծածկուի, բայց չգիտեն, որ մի օր թակարդ են ընկնելու եւ ազատուելու համար տկարների օգնութիւնն են խնդրելու:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year) * $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------

**Address:** ----------------------------------------

**City:** --------- **State:** --------- **Zip Code:** ------

**Country:** ------------

**Tel:** ----------------------- **Fax:** --------------------------


ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
ARMENIAN INDEPENDENCE DAY
FESTIVAL
Փառատօն
Հայաստանի Անկախութեան Օրուայ
SUNDAY, SEPTEMBER 23, 2007
VERDUGO PARK, GLENDALE
11:00AM - 7:00 PM
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ
ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՆԱՐՏԻԻ ՄՐՑԱՇԱՐՔ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
WIN RAFFLE
$10
KIA 2007 OPTIMA LX
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
Ատիս • Սագօ • Ժօզէֆ Գրիգորեան
Սամուէլ Սահակեան • Արմէն Ալոեան
Յարութ Յակոբեան • Հրաչ Պողարեան
Մերուժան Մարգարեան
GLENDALE KIA
AMGA CHANNEL 26
Armenia Media Group of America
Glendale West Pharmacy and Medical Supply
TAMARA Ice Cream
GLENDALE MEDICAL PHARMACY
Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնեցէք (818) 391-7938